

**ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ
ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



F C T C

WHO FRAMEWORK CONVENTION
ON TOBACCO CONTROL

**ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ
ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



ԱՀԿ գրադարանի քարտացուցակագրման տվյալներ.

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առետորի վերացման մասին արձանագրություն

1. Ծխախոտ: 2. Առետուր — օրենսդրություն եւ իրավազորություն: 3. Ծխախոտի արդյունաբերություն — օրենսդրություն: 4. Շուկայավարում: 5. Կառավարության կանոնակարգ: 6. Լիցենզավորում: 7. Միջազգային համագործակցություն: I. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն: II. Ծխախոտի վերահսկման մասին Առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջանակային կոնվենցիա:

ISBN 978 92 4 150524 6

(NLM դասակարգում. HD 9130.6)

© Առողջապահության համաշխարհային կազմակերպություն 2013

Բոլոր իրավունքները պահպանված են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության հրատարակությունները հասանելի են ԱՀԿ կայքէջում (www.who.int) կամ կարելի է ձեռք բերել ԱՀԿ հրատարակչությունից, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Շվեյցարիա, 1211 Ժնև 27, Ապիա պողոտա 20 (հեռ.՝ +41 22 791 3264, ֆաքս՝ +41 22 791 4857, էլ.փոստ՝ bookorders@who.int):

ԱՀԿ հրատարակությունները վաճառքի կամ ոչ առետորային նպատակներով տարածելու համար վերարտադրելու կամ թարգմանելու թույլատվություն ստանալու մասին դիմումներն անհրաժեշտ է ուղարկել ԱՀԿ հրատարակչություն ԱՀԿ կայքէջի միջոցով (www.who.int/about/licensing/copyright_form/en/index.html):

Այս հրատարակության մեջ գործածված անվանումները եւ ներկայացված նյութը չեն ենթադրում Առողջապահության համաշխարհային կազմակերպության որեւէ կարծիք որեւէ երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ դրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ սահմանների սահմանագծի որոշման վերաբերյալ: Քարտեզների վրա նշված կետագծերը ցույց են տալիս այն մոտավոր սահմանային գծերը, որոնց վերաբերյալ դեռեւս լիակատար համաձայնություն չկա:

Կոնկրետ ընկերությունների կամ որոշակի արտադրողների արտադրանքի մասին հիշատակումը չի ենթադրում, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը դրանց հավանություն է տալիս կամ դրանք է առաջարկում՝ նմանատիպ բնույթի այլ չնշված ընկերությունների կամ արտադրանքի նախապատվություն տալով: Բացառությամբ սխալների եւ բացթողումների՝ լիցենզավորված արտադրանքի անվանումները տարբերակված են բառասկզբի մեծատառերով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները սույն հրատարակության մեջ առկա տեղեկությունները ստուգելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, հրապարակված նյութը տարածվում է առանց որեւէ տեսակի երաշխիքի՝ լինի արտահայտված թե ենթադրվող: Նյութի մեկնաբանման եւ օգտագործման պատասխանատվությունը կրում է ընթերցողը: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում դրա օգտագործումից բխող վնասների համար:

Տպագրված է ԱՀԿ փաստաթղթերի ապահովման ծառայության կողմից, Ժնեւ, Շվեյցարիա:

Բովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆ	1
Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրություն	4
ՆԱԽԱԲԱՆ	4
ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
ՀՈԴՎԱԾ 1	9
Եզրույթների օգտագործումը	9
ՀՈԴՎԱԾ 2	12
Սույն արձանագրության եւ այլ համաձայնագրերի ու իրավական փաստաթղթերի միջև կապը	12
ՀՈԴՎԱԾ 3	12
Նպատակը	12
ՄԱՍ II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	13
ՀՈԴՎԱԾ 4	13
Ընդհանուր պարտավորությունները	13
ՀՈԴՎԱԾ 5	15
Անձնական տվյալների պաշտպանությունը	15
ՄԱՍ III. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾՂԹԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	16
ՀՈԴՎԱԾ 6	16
Լիցենզիան, համարժեք հաստատումը կամ հսկողության համակարգը	16
ՀՈԴՎԱԾ 7	21
Պատշաճ ստուգումը	21
ՀՈԴՎԱԾ 8	23
Հետեւելը եւ հետազոծելը	23
ՀՈԴՎԱԾ 9	28
Տվյալներ վարելը	28
ՀՈԴՎԱԾ 10	30
Անվտանգության եւ կանխարգելիչ միջոցները	30
ՀՈԴՎԱԾ 11	32
Համացանցի, հեռահաղորդակցության կամ ցանկացած այլ զարգացող տեխնոլոգիաների միջոցով վաճառքը	32
ՀՈԴՎԱԾ 12	32
Ազատ գոտիները եւ միջազգային տարանցիկ փոխադրումը	32
ՀՈԴՎԱԾ 13	33
Անմաքս վաճառքը	33

ՄԱՍ IV. ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ	34
ՀՈԴՎԱԾ 14.....	34
Ոչ իրավաչափ վարքագիծը, ներառյալ՝ հանցագործությունները.....	34
ՀՈԴՎԱԾ 15.....	38
Իրավաբանական անձանց պատասխանատվությունը	38
ՀՈԴՎԱԾ 16	38
Գործով հետապնդումը եւ պատասխանատվության միջոցները	38
ՀՈԴՎԱԾ 17.....	39
Առգրավման համար վճարումները	39
ՀՈԴՎԱԾ 18	40
Տնօրինումը կամ ոչնչացումը.....	40
ՀՈԴՎԱԾ 19	40
Քննության իրականացման հատուկ հնարքները	40
ՄԱՍ V ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	42
ՀՈԴՎԱԾ 20	42
Ընդհանուր տեղեկատվության փոխանակումը	42
ՀՈԴՎԱԾ 21.....	43
Կիրարկման վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը	43
ՀՈԴՎԱԾ 22	44
Տեղեկատվության փոխանակում. գաղտնիությունը եւ տեղեկատվության պաշտպանությունը	44
ՀՈԴՎԱԾ 23	45
Աջակցությունը եւ համագործակցությունը. Վերապատրաստումը, տեխնիկական աջակցությունը եւ համագործակցությունը գիտական, տեխնիկական եւ տեխնոլոգիական հարցերում.....	45
ՀՈԴՎԱԾ 24	46
Աջակցությունը եւ համագործակցությունը. իրավախախտումների քննություն եւ գործով հետապնդում իրականացնելը.....	46
ՀՈԴՎԱԾ 25	46
Ինքնիշխանության պաշտպանությունը	46
ՀՈԴՎԱԾ 26	47
Իրավագորությունը.....	47
ՀՈԴՎԱԾ 27	48
Համագործակցությունը իրավապահ մարմինների հետ.....	48
ՀՈԴՎԱԾ 28	51
Փոխադարձ վարչական աջակցությունը.....	51
ՀՈԴՎԱԾ 29	52

Փոխադարձ իրավական օգնությունը.....	52
ՀՈԴՎԱԾ 30.....	60
Հանձնումը.....	60
ՀՈԴՎԱԾ 31.....	64
Հանձնումն ապահովող միջոցները.....	64
ՄԱՍ VI. ԶԵԿՈՒՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ	65
ՀՈԴՎԱԾ 32.....	65
Զեկույց ներկայացնելը եւ տեղեկատվություն փոխանակելը.....	65
ՄԱՍ VII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ... ..	67
ՀՈԴՎԱԾ 33.....	67
Կողմերի ժողովը.....	67
ՀՈԴՎԱԾ 34.....	68
Քարտուղարությունը.....	68
ՀՈԴՎԱԾ 35.....	70
Կողմերի ժողովի եւ միջկառավարական կազմակերպությունների միջեւ հարաբերությունները	70
ՀՈԴՎԱԾ 36.....	70
Ֆինանսական ռեսուրսները.....	70
ՄԱՍ VIII. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....	73
ՀՈԴՎԱԾ 37.....	73
Վեճերի կարգավորումը	73
ՄԱՍ IX. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՄՇԱԿՈՒՄԸ.....	73
ՀՈԴՎԱԾ 38.....	73
Սույն արձանագրության մեջ փոփոխություններ կատարելը.....	73
ՀՈԴՎԱԾ 39.....	74
Սույն արձանագրության հավելվածների ընդունումը եւ դրանցում փոփոխություններ կատարելը	74
ՄԱՍ X. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	76
ՀՈԴՎԱԾ 40.....	76
Վերապահումները	76
ՀՈԴՎԱԾ 41.....	76
Արձանագրությունից դուրս գալը.....	76
ՀՈԴՎԱԾ 42.....	77
Ձայնի իրավունքը	77
ՀՈԴՎԱԾ 43.....	77
Ստորագրումը.....	77

ՀՈԴՎԱԾ 44.....	78
Վավերացումը, ընդունումը, հաստատումը, պաշտոնական հավանությունը կամ միացումը ...	78
ՀՈԴՎԱԾ 45.....	79
Ուժի մեջ մտնելը	79
ՀՈԴՎԱԾ 46.....	80
Ավանդապահը	80
ՀՈԴՎԱԾ 47.....	80
Նույնական տեքստերը	80
Հավելված 1.....	81
ԾՎՇԿ/ԿՀ 5(1) որոշումը. Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրություն.....	81
Հավելված 2.	83
Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրության շուրջ բանակցությունների պատմությունը.....	83
Հավելված 3.	88
Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդված	88
Հավելված 4.	91
Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 33-րդ հոդված.....	91

ԱՌԱՋԱԲԱՆ

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առեւտրի վերացման մասին արձանագրությունը Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի (ԱՀԿ ԾՎՇԿ) առաջին արձանագրությունն է, որն ինքնին միանգամայն նոր միջազգային պայմանագիր է: Այն ընդունվել է 2012 թվականի նոյեմբերի 12-ին՝ ԱՀԿ ԾՎՇԿ-ի Կողմերի համաժողովի (ԿՀ) հինգերորդ նստաշրջանում փոխհամաձայնության հիման վրա (Կորեայի Հանրապետություն, Սեուլ, 2012 թվականի նոյեմբերի 12-17): Արձանագրությունը հիմնված է ԱՀԿ ԾՎՇԿ-ի 15-րդ հոդվածի վրա եւ լրացնում է այն, որն անդրադառնում է ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առեւտրին հակազդելու միջոցներին, ինչը ծխախոտի վերահսկման համապարփակ քաղաքականության հիմնական հայեցակետն է:

Արձանագրությունը մշակվել է ի պատասխան ծխախոտային արտադրատեսակների միջազգային աճող ապօրինի առեւտրի, որը լուրջ վտանգ է ներկայացնում հանրային առողջության համար: Ապօրինի առեւտուրը մեծացնում է ծխախոտային արտադրատեսակների հասանելիությունը եւ մատչելիությունը՝ այդպիսով խթանելով ծխախոտային համաճարակը եւ խաթարելով ծխախոտի վերահսկման քաղաքականությանը: Այն նաեւ պետական եկամուտների զգալի կորուստներ է առաջացնում եւ միեւնույն ժամանակ նպաստում անդրազգային հանցավոր գործունեության ֆինանսավորմանը:

Արձանագրության նպատակը ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առեւտրի բոլոր ձեւերի վերացումն է՝ համաձայն ԱՀԿ ԾՎՇԿ-ի 15-րդ հոդվածի պայմանների:

Արձանագրությունը մասնավորապես նպատակաուղղված է ծխախոտային արտադրատեսակների մատակարարման շղթայի ապահովմանը՝ միջոցներ, որոնք մեծամասամբ համարվում են Արձանագրության «սիրտը»: Այն պահանջում է Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում հետեւելու եւ հետագծելու համաշխարհային ռեժիմի ստեղծում, որը կներառի ազգային եւ (կամ) տարածաշրջանային մակարդակով հետեւելու եւ հետագծելու համակարգեր եւ

Կոնվենցիայի քարտուղարությունում տեղակայված տեղեկատվության փոխանակման համաշխարհային կետ: Մատակարարման շղթայի նկատմամբ հսկողությունն ապահովող մյուս դրույթները կարգավորում են լիցենզավորումը, պատշաճ ստուգումը, տվյալների վարումը եւ անվտանգության եւ կանխարգելիչ միջոցները, ինչպես նաեւ միջոցներ՝ կապված համացանցի եւ հեռահաղորդակցության վրա հիմնված վաճառքների, անմաքս վաճառքների եւ ազատ գոտիների ու միջազգային տարանցիկ փոխադրման հետ:

Արձանագրությունը ներառում է նաեւ այնպիսի կարեւոր հարցեր, որոնք վերաբերում են իրավախախտումներին՝ պարունակելով դրույթներ պատասխանատվության, գործով հետապնդման եւ պատասխանատվության միջոցների, առգրավման համար վճարումների եւ քննության իրականացման հատուկ հնարքների, ինչպես նաեւ բռնագրավված արտադրատեսակների տնօրինման եւ ոչնչացման վերաբերյալ: Հիմնական հոդվածների մեկ այլ առանցքային խումբ անդրադառնում է միջազգային համագործակցության հարցին, ինչպես օրինակ՝ տեղեկատվության փոխանակման, տեխնիկական հարցերով եւ իրավապահ մարմինների հետ համագործակցության, ինքնիշխանության պաշտպանության, իրավազրության, փոխադարձ իրավական եւ վարչական օգնության եւ հանձնման վերաբերյալ միջոցները:

Արձանագրությամբ սահմանվում են Կողմերի՝ զեկույց ներկայացնելու պարտավորությունները՝ կապված ԱՀԿ ԾՎՇԿ-ի զեկույց ներկայացնելու համակարգի հետ, ինչպես նաեւ դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական եւ ինստիտուցիոնալ կարգավորումները: Արձանագրությամբ ամրագրվում է, որ Կողմերի ժողովն Արձանագրության կարգավորող մարմինն է, եւ որ Կոնվենցիայի քարտուղարությունը նաեւ Արձանագրության քարտուղարությունն է:

Արձանագրությունը հայտարարվել է բաց ստորագրման համար 2013 թվականի հունվարի 10-ին ժնեում գտնվող ԱՀԿ-ի Կենտրոնական գրասենյակում: Այդ միջոցառմանը մասնակցել են ավելի քան 50 Կողմեր, որի ընթացքում բոլոր վեց տարածաշրջանները ներկայացնող 12 Կողմեր ստորագրել են Արձանագրությունը: Այնուհետեւ Արձանագրությունը բաց է մնացել ստորագրման

համար Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական գրասենյակում, մինչև 2014 թվականի հունվարի 9-ը: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն Արձանագրության ավանդապահն է (Հոդված 46):

ԱՀԿ ԾՎՇԿ-ի ցանկացած Կողմ կարող է դառնալ Արձանագրության Կողմ: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման, պաշտոնական հավանություն տալու կամ միանալու վերաբերյալ քառասուներորդ փաստաթուղթն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից հետո իննսուներորդ օրը:

Արձանագրության մշակումն ու ընդունումը Կողմերի եւ բազմաթիվ պետական մարմինների միջև սերտ համագործակցության արդյունք է, որը ցույց է տալիս, թե ինչպես հանրային առողջապահության հարցի վերաբերյալ միասնական դիրքորոշումը կարող է նպաստել առողջապահության եւ այլ ոլորտներում կառավարության կարեւոր խնդիրների լուծմանը: Շարունակական միջոլորտային եւ միջազգային համագործակցությունը, այդ թվում՝ համագործակցությունը համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես որ նախատեսված է Արձանագրության մեջ, վճռորոշ կլինի դրա հաջող իրականացման համար:

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրությունը հենանիշ է ծխախոտի դեմ համաշխարհային գործողությունների ամրապնդման գործում եւ նոր իրավական գործիք է հանրային առողջության ոլորտում: Այն համապարփակ գործիքով լրացնում է ԱՀԿ ԾՎՇԿ-ն՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին հակազդելու եւ վերջնականապես վերացնելու եւ առողջապահության հարցում միջազգային համագործակցության իրավական ոլորտներն ամրապնդելու նպատակով:

Դոկտոր Հայկ Նիկողոսյան

Կոնվենցիայի քարտուղարության ղեկավար

**Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի
վերացման մասին արձանագրություն**

ՆԱԽԱԲԱՆ

Սույն արձանագրության կողմերը,

հաշվի առնելով, որ 2003 թվականի մայիսի 21-ին Առողջապահության համաշխարհային հիսունվեցերորդ ասամբլեան փոխհամաձայնության հիման վրա ընդունել է Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 27-ին,

ընդունելով, որ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիան Միավորված ազգերի կազմակերպության ամենաարագ վավերացված պայմանագրերից մեկն է եւ հիմնարար գործիք՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նպատակների ձեռքբերման համար,

վկայակոչելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանադրության նախաբանը, որում նշվում է, որ առողջության առավելագույն բարձր մակարդակից օգտվելու հնարավորությունը յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից մեկն է՝ անկախ ռասայից, կրոնից, քաղաքական համոզմունքներից, տնտեսական կամ սոցիալական պայմաններից,

վճռականորեն տրամադրված լինելով նաեւ առաջնահերթություն տալ հանրային առողջությունը պաշտպանելու իրենց իրավունքին,

խորը մտախոզվելով այն փաստով, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը նպաստում է ծխախոտի համաճարակի տարածմանը, որը գլոբալ հիմնահարց է՝ հանրային առողջության համար լուրջ հետեւանքների առաջացման վտանգով, որը պահանջում է ներպետական եւ միջազգային արդյունավետ, անհրաժեշտ եւ համակողմանի պատասխան գործողություններ,

այնուհետև ընդունելով, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը խաչընդոտում է ծխախոտի վերահսկման ամրապնդման համար նախատեսված գնային եւ հարկային միջոցների իրականացումը եւ այդպիսով մեծացնում է ծխախոտային արտադրատեսակների հասանելիությունն ու մատչելիությունը,

լուրջ մտահոգվելով այն բացասական հետեւանքներով, որ ապօրինի առևտրի միջոցով ձեռք բերված ծխախոտային արտադրատեսակների հասանելիության ու մատչելիության աճն առաջացնում է մասնավորապես երիտասարդների, աղքատների եւ այլ խոցելի խմբերի հանրային առողջության եւ բարեկեցության նկատմամբ,

լուրջ մտահոգվելով զարգացող եւ անցումային տնտեսություն ունեցող երկրների վրա ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի անհամաչափ տնտեսական եւ սոցիալական հետեւանքներով,

գիտակցելով, որ անհրաժեշտ է զարգացնել գիտական, տեխնիկական եւ ինստիտուցիոնալ կարողություններ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձեւերի վերացմանն ուղղված համապատասխան ազգային, տարածաշրջանային եւ միջազգային միջոցներ ծրագրելու եւ իրականացնելու համար,

ընդունելով, որ ռեսուրսների եւ համապատասխան տեխնոլոգիաների հասանելիությունը մեծ նշանակություն ունի Կողմերի՝ հատկապես զարգացող եւ անցումային տնտեսություն ունեցող երկրներում ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձեւերը վերացնելու կարողությունը մեծացնելու համար,

ընդունելով նաեւ, որ չնայած ստեղծվել են ազատ գոտիներ՝ օրինական առևտուրը հեշտացնելու համար, դրանք օգտագործվել են ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի գլոբալիզացիան հեշտացնելու համար՝ կապված ինչպես մաքսանենգ արտադրատեսակների ապօրինի տարանցման, այնպես էլ ապօրինի ծխախոտային արտադրատեսակների արտադրության հետ,

ընդունելով նաեւ, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը քայքայում է Կողմերի տնտեսությունները եւ բացասաբար է անդրադառնում նրանց կայունության եւ անվտանգության վրա,

տեղյակ լինելով նաեւ, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրն առաջացնում է ֆինանսական շահույթ, որն օգտագործվում է անդրազգային հանցավոր գործունեության ֆինանսավորման համար, ինչը խոչընդոտում է կառավարության նպատակները,

ընդունելով, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը խաթարում է առողջապահական նպատակները, լրացուցիչ լարվածություն է ստեղծում առողջապահական համակարգերի համար եւ առաջացնում է եկամուտների կորուստ Կողմերի տնտեսություններում,

նկատի ունենալով Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 5.3 հոդվածը, որով Կողմերը համաձայնում են, որ ծխախոտի վերահսկման առնչությամբ իրենց հանրային առողջապահության քաղաքականության մշակման եւ իրականացման ժամանակ Կողմերը գործում են այնպես, որ ազգային օրենսդրությանը համապատասխան պաշտպանեն իրենց քաղաքականությունը ծխախոտի արդյունաբերության առևտրային եւ այլ շահերից,

ընդգծելով ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերահսկման ռազմավարությունների ձախողմանը կամ ի չիք դարձնելուն ուղղված ծխախոտի արդյունաբերության բոլոր ջանքերի նկատմամբ զգոնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը եւ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերահսկման ռազմավարությունների նկատմամբ բացասականորեն ազդող ծխախոտի արդյունաբերության գործունեության մասին տեղյակ լինելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 6.2 հոդվածը, որը խրախուսում է Կողմերին համապատասխան

դեպքերում արգելել կամ սահմանափակել հարկերից եւ տուրքերից ազատված ծխախոտային արտադրատեսակների վաճառքը միջազգային ուղեւորություններ իրականացնող անձանց եւ (կամ) վերջիններիս կողմից այդ արտադրատեսակների ներմուծումը,

ընդունելով նաեւ, որ միջազգային տարանցման եւ փոխաբեռնման ժամանակ ծխախոտը եւ ծխախոտային արտադրատեսակներն ապօրինի առեւտրի ուղիներ են գտնում,

հաշվի առնելով, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առեւտրի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի արդյունավետ գործողությունների համար պահանջվում է համապարփակ միջազգային մոտեցում ապօրինի առեւտրի բոլոր հայեցակետերի, այդ թվում, ըստ անհրաժեշտության, ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ապօրինի առեւտրի նկատմամբ եւ սերտ համագործակցություն դրա շուրջ,

հիշեցնելով եւ ընդգծելով այլ համապատասխան միջազգային համաձայնագրերի կարելիությունը, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ, Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան կոռուպցիայի դեմ եւ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին եւ այն, որ այս Կոնվենցիաների Կողմերը պարտավոր են անհրաժեշտության դեպքում կիրառել այդ Կոնվենցիաների համապատասխան դրույթները ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ապօրինի առեւտրի նկատմամբ, ինչպես նաեւ խրախուսելով այն Կողմերին, որոնք դեռ չեն դարձել այդ համաձայնագրերի Կողմեր, դիտարկել Կողմ դառնալու հանգամանքը,

ընդունելով Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի շրջանակներում գործող՝ Կոնվենցիայի քարտուղարության եւ համապատասխան դեպքերում՝ Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների եւ հանցագործության դեմ պայքարի գրասենյակի, Համաշխարհային մաքսային կազմակերպության եւ այլ մարմինների միջեւ ուժեղացված համագործակցության կառուցման անհրաժեշտությունը,

վերհիշելով Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածը, որում Կողմերն ընդունում են, *inter alia*, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձևերի, այդ թվում՝ մաքսանենգության եւ ապօրինի արտադրության վերացումը ծխախոտի վերահսկման անհրաժեշտ բաղադրիչներ են,

նկատի ունենալով, որ սույն արձանագրությունը չի ձգտում անդրադառնալ մտավոր սեփականության իրավունքներին վերաբերող հարցերին, եւ

համոզված լինելով, որ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիան համապարփակ արձանագրությամբ լրացնելը կլինի ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին եւ դրա ծանր հետեւանքներին հակազդելու հզոր, արդյունավետ միջոց,

սույնով համաձայնեցին հետեւյալի մասին.

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 1

Եզրույթների օգտագործումը

1. «Բրոքերություն» նշանակում է հանդես գալ որպես գործակալ այլ անձանց համար, օրինակ, բանակցային պայմանագրերի, գնումների կամ վաճառքի ժամանակ վճարի կամ միջնորդավճարի դիմաց:
2. «Ծխախոտ» նշանակում է ծխելու համար նախատեսված, ծխախոտի թղթի մեջ փաթաթած՝ կտրատած ծխախոտի գլանակ: Սա չի ներառում հատուկ տարածաշրջանային արտադրատեսակները, ինչպիսիք են բիդին, անգ հունը [ang hoon] կամ այլ նմանատիպ արտադրատեսակներ, որոնք կարելի է փաթաթել թղթի կամ տերեւների մեջ: Ց-րդ հոդվածի նպատակներով «ծխախոտ» եզրույթը ներառում է նաեւ բարակ կտրատած՝ ծխախոտ պատրաստելու նպատակներով «ինքնուրույն փաթաթած» ծխախոտ:
3. «Բռնագանձում», որը կիրառելի լինելու դեպքում ներառում է բռնագրավումը, նշանակում է դատարանի կամ իրավասու այլ մարմնի որոշմամբ գույքից մշտական գրկելը:
4. «Վերահսկվող առաքում» նշանակում է ապօրինի կամ կասկածելի ապրանքները մեկ կամ մի քանի պետությունների տարածքից, տարածքով կամ դեպի տարածք անցնելը թույլատրելու հնարքը՝ այդ պետությունների իրավասու մարմինների իմացությամբ եւ նրանց հսկողության ներքո՝ հանցագործությունը քննելու եւ հանցագործության կատարման մեջ ներգրավված անձանց բացահայտելու նպատակով:
5. «Ազատ գոտի» նշանակում է Կողմի տարածքի մի մասը, որտեղ ներմուծված ցանկացած ապրանք, այնքանով, որքանով ներկրման մաքսատուրքերը եւ հարկերը կիրառելի են, ընդհանուր առմամբ համարվում է մաքսային տարածքից դուրս գտնվող տարածք:

6. «Ապօրինի առևտուր» նշանակում է օրենսդրությամբ արգելված պրակտիկայի կամ վարքագծի ցանկացած ձև, որը կապված է արտադրության, առաքման, ստացման, տնօրինման, բաշխման, վաճառքի կամ ձեռք բերման հետ, ներառյալ՝ այդպիսի գործունեությունը խթանելու նպատակ ունեցող պրակտիկայի կամ վարքագծի ցանկացած ձև:
7. «Լիցենզիա» նշանակում է իրավասու մարմնի թույլտվությունը, որը տրվում է համապատասխան դիմումը կամ այլ փաստաթղթեր իրավասու մարմին ներկայացնելուց հետո:
8. ա) «Արտադրական սարքավորումներ» նշանակում է մեքենաներ, որոնք նախատեսված կամ հարմարեցված են բացառապես ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար եւ արտադրական գործընթացի անբաժանելի մաս են կազմում¹:
բ) «Դրա ցանկացած մաս» արտադրական սարքավորումների համատեքստում նշանակում է ծխախոտային արտադրատեսակների արտադրության մեջ օգտագործվող արտադրական սարքավորումների համար եզակի համարվող ցանկացած նույնականացվող մաս:
9. «Կողմ» նշանակում է սույն արձանագրության Կողմ, եթե համատեքստում այլ բան նշված չէ:
10. «Անձնական տվյալներ» նշանակում է նույնականացված կամ նույնականացման ենթակա ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն:
11. «Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն» նշանակում է ցանկացած կազմակերպություն, որը ներառում է մի քանի ինքնիշխան պետություններ, եւ որին իր անդամ պետությունները մի շարք հարցերի վերաբերյալ փոխանցել են իրենց իրավասությունները, ներառյալ՝

¹ Կողմերն այս նպատակով, ըստ անհրաժեշտության, կարող են ներառել հղում Համաշխարհային մաքսային կազմակերպության Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգին:

այդ հարցերի վերաբերյալ անդամ պետություններին պարտավորեցնող որոշումներ ընդունելու լիազորությունը²:

12. «Մատակարարման շղթան» ներառում է ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների արտադրությունը, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ներկրումը կամ արտահանումը եւ ըստ անհրաժեշտության կարող է տարածվել հետեւյալ գործունեություններից մեկի կամ մի քանիսի նկատմամբ, եթե Կողմն այդպես է որոշում.

ա) ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր,

բ) ծխախոտի աճեցում՝ բացառությամբ փոքրամասշտաբ ավանդական աճեցնողների, ֆերմերների եւ արտադրողների,

գ) ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների առևտրային քանակությունների փոխադրում, եւ

դ) ծխախոտի եւ ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների մեծածախ առևտուր, բրոքերություն, պահեստավորում կամ բաշխում:

13. «Ծխախոտային արտադրատեսակներ» նշանակում է արտադրանք, որ ամբողջությամբ կամ մասամբ արտադրված է հումք հանդիսացող ծխախոտի տերեւից՝ արտադրված այնպես, որ օգտագործվի ծխելու, ծծելու, ծամելու կամ ներշնչով ընդունելու համար:

14. «Հետեւելը եւ հետագծելը» նշանակում է իրավասու մարմինների կամ նրանց անունից գործող ցանկացած այլ անձի կողմից մատակարարման շղթայով ապրանքների անցած երթուղու կամ շարժման համակարգված դիտանցում եւ վերստեղծում՝ 8-րդ հոդվածում նշված կարգով:

² Ըստ կիրառելիության՝ «ազգային» կամ «ներպետական» բառերը հավասարապես կվերաբերեն տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններին:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն արձանագրության եւ այլ համաձայնագրերի ու իրավական փաստաթղթերի միջեւ կապը

1. Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի դրույթները, որոնք կիրառվում են դրա արձանագրությունների նկատմամբ, կիրառվում են սույն արձանագրության նկատմամբ:
2. Կողմերը, որոնք կնքել են Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված տեսակների համաձայնագրեր, այդ համաձայնագրերի մասին հայտնում են Կողմերի ժողովին Կոնվենցիայի քարտուղարության միջոցով:
3. Սույն արձանագրության մեջ ոչինչ չի ազդում որեւէ Կողմի համար գործող ցանկացած այլ միջազգային կոնվենցիայով, պայմանագրով կամ միջազգային համաձայնագրով ստանձնած այդ Կողմի իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնք համարվում են ավելի նպաստավոր ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացմանը հասնելու համար:
4. Սույն արձանագրության մեջ ոչինչ չի ազդում միջազգային իրավունքով, այդ թվում՝ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով Կողմերի ստանձնած այլ իրավունքների, պարտավորությունների եւ պարտականությունների վրա:

ՀՈԴՎԱԾ 3

Նպատակը

Սույն արձանագրության նպատակն է վերացնել ծխախոտային արտադրատեսակների բոլոր ձեւերը՝ համաձայն Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի պայմանների:

ՄԱՍ II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 4

Ընդհանուր պարտավորությունները

1. Ի լրումն Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների՝ Կողմերը՝
 - ա) ընդունում եւ իրականացնում են արդյունավետ միջոցներ վերահսկելու եւ կարգավորելու սույն արձանագրության մեջ ներառված ապրանքների մատակարարման շղթան՝ այդ ապրանքների ապօրինի առևտուրը կանխարգելելու, կանխելու, հայտնաբերելու, քննելու եւ գործով հետապնդում իրականացնելու համար, ինչպես նաեւ համագործակցում են միմյանց հետ այդ նպատակով.
 - բ) իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մեծացնելու սույն արձանագրության մեջ ներառված ապրանքների ապօրինի առևտուրը կանխարգելելու, կանխելու, հայտնաբերելու, քննելու, գործով հետապնդում իրականացնելու եւ դրա բոլոր ձեւերը վերացնելու համար պատասխանատու իրենց իրավասու մարմինների եւ ծառայությունների, այդ թվում՝ մաքսային ծառայության եւ ոստիկանության արդյունավետությունը.
 - գ) ընդունում են արդյունավետ միջոցներ՝ սույն արձանագրության նպատակներին հասնելու եւ իրավասու մարմինների համար սույն արձանագրության շրջանակներում փոխանակվող տեղեկատվության հասանելիությունը եւ անվտանգ փոխանակումն ապահովելու նպատակով ստացվող տեխնիկական օժանդակությունը եւ ֆինանսական աջակցությունը, կարողությունների զարգացումը եւ միջազգային համագործակցությունը դյուրինացնելու կամ ձեռք բերելու համար.

- դ) սերտորեն համագործակցում են միմյանց հետ՝ համաձայն իրենց համապատասխան ներպետական իրավական եւ վարչական համակարգերի՝ իրավապահ մարմինների՝ ոչ իրավաչափ վարքագծի, այդ թվում՝ սույն արձանագրության 14-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների դեմ պայքարելուն ուղղված գործունեության արդյունավետությունը մեծացնելու համար.
 - ե) համագործակցում եւ անհրաժեշտության դեպքում հաղորդակցվում են համապատասխան տարածաշրջանային եւ միջազգային միջկառավարական կազմակերպությունների հետ սույն արձանագրությամբ ընդգրկված տեղեկատվության անվտանգ փոխանակման³ հարցում՝ սույն արձանագրության արդյունավետ իրականացմանը նպաստելու նպատակով, եւ
 - զ) համագործակցում են իրենց տրամադրության տակ առկա միջոցներով եւ ռեսուրսներով՝ երկկողմ եւ բազմակողմ ֆինանսավորման մեխանիզմների միջոցով սույն արձանագրության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներն ավելացնելու ուղղությամբ:
2. Սույն արձանագրությամբ ստանձնած իրենց պարտավորություններն իրականացնելիս Կողմերն ապահովում են առավելագույն հնարավոր թափանցիկություն ցանկացած փոխգործակցության առնչությամբ, որ կարող են ունենալ ծխախոտի արդյունաբերության հետ:

³ Երկու կողմերի միջեւ տեղեկատվության անվտանգ փոխանակումը պետք է պաշտպանված լինի գաղտնալսումից եւ կեղծումից (կեղծարարությունից): Այլ կերպ ասած՝ երրորդ կողմը չի կարող կարգալ կամ փոփոխել երկու կողմերի միջեւ փոխանակվող տեղեկատվությունը:

ՀՈԴՎԱԾ 5

Անձնական տվյալների պաշտպանությունը

Կողմերը սույն արձանագրությունը կիրարկելիս, ազգային օրենսդրությանը համապատասխան, պաշտպանում են ֆիզիկական անձանց անձնական տվյալները՝ անկախ ազգությունից կամ բնակության վայրից՝ հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության միջազգային չափանիշները:

ՄԱՍ III. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՐՔԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 6

Լիցենզիան, համարժեք հաստատումը կամ հսկողության համակարգը

1. Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի նպատակներին հասնելու եւ ծխախոտային արտադրատեսակների ու արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի վերացման նպատակով յուրաքանչյուր Կողմ արգելում է որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից հետեւյալ գործունեություններից որեւէ մեկի կատարումը՝ բացառությամբ, եթե այն կատարվում է իրավասու մարմնի կողմից ազգային օրենսդրությանը համապատասխան տրված լիցենզիայի կամ համարժեք հաստատման (այսուհետ՝ լիցենզիա) կամ ներդրված հսկողության համակարգի համաձայն.
 - ա) ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների արտադրությունը, եւ
 - բ) ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ներկրումը եւ արտահանումը:
2. Յուրաքանչյուր Կողմ, այնքանով, որքանով որ նպատակահարմար է համարում, եւ պայմանով, որ գործունեության հետեւյալ տեսակներն արգելված չեն ազգային օրենսդրությամբ, ձգտում է լիցենզավորել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը ներգրավված է հետեւյալ գործունեության մեջ.
 - ա) ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր,
 - բ) ծխախոտի աճեցում՝ բացառությամբ փոքրամասշտաբ ավանդական աճեցնողների, ֆերմերների եւ արտադրողների,

- գ) ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների առևտրային քանակությունների փոխադրում, եւ
 - դ) ծխախոտի եւ ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների մեծածախ առևտուր, բրոքերություն, պահեստավորում կամ բաշխում:
3. Լիցենզավորման արդյունավետ համակարգ ապահովելու նպատակով յուրաքանչյուր Կողմ՝
- ա) ստեղծում կամ նշանակում է իրավասու մարմին կամ մարմիններ՝ սույն արձանագրության դրույթներին համապատասխան լիցենզիաներ տրամադրելու, դրանց ժամկետը երկարաձգելու, կասեցնելու, չեղյալ համարելու եւ (կամ) չեղարկելու համար եւ իր ազգային օրենսդրությանը համապատասխան՝ իրականացնելու 1-ին կետում նշված գործունեության տեսակները.
 - բ) պահանջում է, որ լիցենզիա ստանալու համար ցանկացած դիմում պարունակի դիմումատուի վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները, որը, ըստ կիրառելիության, պետք է ներառի՝
 - i) դիմումատուի ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ նրա ինքնությանը վերաբերող տեղեկությունները, այդ թվում՝ լրիվ անունը, առևտրային անվանումը, ձեռնարկատիրական գործունեության գրանցման համարը (առկայության դեպքում), հարկ վճարողի հաշվառման կիրառելի համարները (առկայության դեպքում) եւ ցանկացած այլ տեղեկություններ, որոնք թույլ կտան, որ նույնականացումը տեղի ունենա.
 - ii) դիմումատուի իրավաբանական անձ լինելու դեպքում՝ դրա ինքնությանը վերաբերող տեղեկությունները, այդ թվում՝ իրավաբանական լրիվ անունը, առևտրային անվանումը, ձեռնարկատիրական գործունեության գրանցման համարը,

հիմնադրման ամսաթիվը եւ վայրը, ընկերության գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը եւ գործունեության իրականացման հիմնական վայրը, հարկ վճարողի հաշվառման կիրառելի համարները, հիմնադրման փաստաթղթի կամ համարժեք փաստաթղթերի պատճենները, ընկերության մասնաճյուղերը, տնօրենների եւ ցանկացած նշանակված իրավաբանական ներկայացուցչի անունները, այդ թվում՝ ցանկացած այլ տեղեկություններ, որոնք թույլ կտան, որ նույնականացումը տեղի ունենա.

- iii) արտադրական միավորի (միավորների) գործունեության իրականացման ճշգրիտ վայրը, դիմումատուի կողմից ղեկավարվող ձեռնարկության պահեստի գտնվելու վայրը եւ արտադրական հնարավորությունները.
- iv) դիմումի մեջ ներառված ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների մանրամասները, ինչպիսիք են արտադրատեսակի նկարագրությունը, արտադրական սարքավորման անվանումը, գրանցված առևտրային նշանը՝ առկայության դեպքում, տեսակը, ապրանքանիշը, մոդելը կամ արտադրողը եւ սերիան.
- v) այն վայրի նկարագրությունը, որտեղ արտադրական սարքավորումը տեղադրվելու եւ օգտագործվելու է.
- vi) դատվածության վերաբերյալ ցանկացած տվյալների վերաբերող փաստաթղթեր կամ հայտարարություն.
- vii) բանկային հաշիվների ամբողջական նույնականացումը, որոնք նախատեսվում են համապատասխան գործարքներում օգտագործվելու համար, եւ վճարման այլ համապատասխան մանրամասներ, եւ

- viii) ծխախոտային արտադրատեսակների նախատեսված օգտագործման եւ վաճառքի նախատեսված շուկայի նկարագրությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն բանին, որ ապահովվի ծխախոտային արտադրատեսակների արտադրության կամ մատակարարման համապատասխանությունը ողջամտորեն կանխատեսված պահանջարկին.
- գ) դիտանցում է իրականացնում եւ կիրառելիության դեպքում հավաքագրում է լիցենզավորման ցանկացած վճար, որը կարող է գանձվել, եւ դիտարկում է դրանց օգտագործման հնարավորությունը լիցենզավորման համակարգի արդյունավետ վարչարարության եւ կիրարկման կամ հանրային առողջապահության կամ ցանկացած այլ հարակից գործունեության համար՝ ազգային օրենսդրությանը համապատասխան.
- դ) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ կանխարգելելու, հայտնաբերելու եւ քննելու լիցենզավորման համակարգի շահագործման մեջ առկա ցանկացած անկանոն կամ կեղծ գործելակերպ.
- ե) ձեռնարկում է միջոցներ, ինչպիսիք են, ըստ անհրաժեշտության, լիցենզիայի պարբերական վերանայումը, ժամկետի երկարաձգումը, ստուգումը կամ աուդիտը.
- զ) ըստ անհրաժեշտության սահմանում է լիցենզիաների գործողության ժամկետը լրանալու եւ հետագայում համապատասխանաբար դա ստանալու համար նորից դիմելու կամ դիմումի տեղեկատվությունը թարմացնելու ժամկետը.
- է) պարտավորեցնում է լիցենզավորված ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի նախապես տեղեկացնել իրավասու մարմնին իր գործունեության իրականացման վայրի ցանկացած փոփոխության

կամ լիցենզավորված գործունեությանը վերաբերող տեղեկատվության ցանկացած էական փոփոխության մասին.

ը) պարտավորեցնում է լիցենզավորված ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի համապատասխան գործողության դեպքում նախապես տեղեկացնել իրավասու մարմնին արտադրական սարքավորումների ցանկացած ձեռքբերման կամ տնօրինման մասին, եւ

թ) ապահովում է, որ այդպիսի արտադրական սարքավորման կամ դրա ցանկացած մասի ոչնչացումը տեղի ունենա իրավասու մարմնի վերահսկողության ներքո:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ոչ մի լիցենզիա չտրամադրվի եւ (կամ) չփոխանցվի առանց առաջադրվող լիցենզավորված անձից 3-րդ կետում պարունակվող համապատասխան տեղեկատվության ստացման եւ առանց իրավասու մարմնի նախնական հաստատման:

5. Սույն արձանագրության ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո Կողմերի ժողովն իր հաջորդ նստաշրջանում ապահովում է ապացույցների վրա հիմնված հետազոտության անցկացում՝ պարզելու համար, թե արդյոք գոյություն ունեն ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար էական նշանակություն ունեցող առանցքային ներդրումներ, որոնք հնարավոր է նույնականացնել, եւ որոնք կարող են ենթարկվել արդյունավետ վերահսկողության մեխանիզմի: Հիմնվելով այդ հետազոտության վրա՝ Կողմերի ժողովը քննարկում է համապատասխան գործողությունները:

ՀՈԴՎԱԾ 7

Պատշաճ ստուգումը

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ազգային օրենսդրությանը եւ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի նպատակներին համաձայն, պահանջում է, որ ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների մատակարարման շղթայում ներգրավված բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք՝
 - ա) իրականացնեն պատշաճ ստուգում գործնական հարաբերություններ սկսելուց առաջ եւ դրա ընթացքում,
 - բ) դիտանցում իրականացնեն իրենց հաճախորդների համար կատարվող վաճառքի նկատմամբ՝ ապահովելու քանակությունների համապատասխանությունը վաճառքի կամ օգտագործման նախատեսված շուկայում այդ արտադրատեսակների պահանջարկին, եւ
 - գ) հայտնել իրավասու մարմիններին ցանկացած այնպիսի ապացույցի մասին, որ հաճախորդը զբաղվում է սույն արձանագրությունից բխող իր պարտավորություններին հակասող գործունեությամբ:
2. 1-ին կետի համաձայն իրականացվող պատշաճ ստուգումը, ըստ անհրաժեշտության, ազգային օրենսդրությանը եւ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի նպատակներին համապատասխան, ներառում է, *inter alia*, պահանջներ հաճախորդի նույնականացման համար, ինչպիսիք են հետեւյալի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերումը եւ թարմացումը.
 - ա) հաստատում այն մասին, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձն ունի լիցենզիա՝ 6-րդ հոդվածի համաձայն,

- բ) հաճախորդի ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ նրա ինքնությանը վերաբերող տեղեկությունները, այդ թվում՝ լրիվ անունը, առևտրային անվանումը, ձեռնարկատիրական գործունեության գրանցման համարը (առկայության դեպքում), հարկ վճարողի հաշվառման կիրառելի համարները (առկայության դեպքում) եւ նրա պաշտոնական նույնականացման ստուգումը,
 - գ) հաճախորդի իրավաբանական անձ լինելու դեպքում՝ դրա ինքնությանը վերաբերող տեղեկությունները, այդ թվում՝ լրիվ անունը, առևտրային անվանումը, ձեռնարկատիրական գործունեության գրանցման համարը, հիմնադրման ամսաթիվը եւ վայրը, ընկերության գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը եւ գործունեության իրականացման հիմնական վայրը, հարկ վճարողի հաշվառման կիրառելի համարները, հիմնադրման փաստաթղթի կամ համարժեք փաստաթղթերի պատճենները, ընկերության մասնաճյուղերը, տնօրենների եւ ցանկացած նշանակված իրավաբանական ներկայացուցիչների անունները, ներառյալ՝ ներկայացուցիչների անունները եւ նրանց պաշտոնական նույնականացման ստուգումը,
 - դ) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների նախատեսված օգտագործման եւ դրանց վաճառքի նախատեսված շուկայի նկարագրությունը, եւ
 - ե) այն վայրի նկարագրությունը, որտեղ արտադրական սարքավորումները տեղադրվելու եւ օգտագործվելու են:
3. 1-ին կետի համաձայն իրականացվող պատշաճ ստուգումը կարող է ներառել պահանջներ հաճախորդի նույնականացման համար, ինչպիսիք են հետեւյալի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերումը եւ թարմացումը.
- ա) դատվածության վերաբերյալ ցանկացած տվյալի վերաբերող փաստաթղթեր կամ հայտարարություն, եւ

- բ) բանկային հաշիվների նույնականացում, որոնք նախատեսվում են գործարքներում օգտագործվելու համար:
4. Յուրաքանչյուր Կողմ, հիմնվելով 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն ստացված տեղեկատվության վրա, ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համապատասխանությունը սույն արձանագրությունից բխող պարտավորություններին, որը կարող է ներառել Կողմի իրավագործության սահմաններում հաճախորդին ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով արգելափակված հաճախորդ դարձնելը:

ՀՈԴՎԱԾ 8

Հետեւելը եւ հետագծելը

1. Մատակարարման շղթայի հետագա ապահովման եւ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի քննությանն օժանդակելու նպատակներով Կողմերը համաձայնում են սույն արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում ստեղծել հետեւելու եւ հետագծելու համաշխարհային ռեժիմ, որը բաղկացած կլինի ազգային եւ (կամ) տարածաշրջանային մակարդակով հետեւելու եւ հետագծելու համակարգերից եւ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի շրջանակներում գործող Կոնվենցիայի քարտուղարությունում տեղակայված եւ բոլոր Կողմերի համար հասանելի՝ տեղեկատվության փոխանակման համաշխարհային համակարգող մարմնից, հնարավորություն տալով Կողմերին իրականացնել հարցումներ եւ ստանալ համապատասխան տեղեկատվություն:
2. Յուրաքանչյուր Կողմ սույն հոդվածի համաձայն ստեղծում է Կողմի կողմից վերահսկվող հետեւելու եւ հետագծելու համակարգ ծխախոտային բոլոր արտադրատեսակների համար, որոնք արտադրվում են նրա տարածքում

կամ ներկրվում են նրա տարածք՝ հաշվի առնելով իրենց սեփական ազգային կամ տարածաշրջանային հատուկ կարիքները եւ առկա լավագույն գործելակերպերը:

3. Հետեւելու եւ հետագծելու արդյունավետ իրագործումը հնարավոր դարձնելու նպատակով յուրաքանչյուր Կողմ պահանջում է, որ այդ Կողմի համար սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում բոլոր միավոր կապոցների եւ փաթեթների, ինչպես նաեւ սիգարետների ցանկացած արտաքին փաթեթավորման վրա, իսկ ծխախոտային այլ արտադրատեսակների դեպքում՝ սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո տասը տարվա ընթացքում փակցվեն կամ դրանց մաս կազմեն եզակի, ապահով եւ ոչ շարժական նույնականացման նշումներ (այսուհետ՝ եզակի նույնականացման նշումներ), ինչպիսիք են ծածկագրերը կամ դրոշմակնիքները:

4.1. 3-րդ կետի նպատակներով յուրաքանչյուր Կողմ, որպես հետեւելու եւ հետագծելու համաշխարհային ռեժիմի մաս, Կողմերին ծխախոտային արտադրատեսակների ծագումը, կիրառելիության դեպքում շեղման կետը որոշելու հարցում օգնելու եւ ծխախոտային արտադրատեսակների շարժը եւ դրանց իրավական կարգավիճակը դիտանցելու եւ վերահսկելու նպատակով պահանջում է, որ հետեւյալ տեղեկատվությունն առկա լինի ուղղակիորեն կամ հասանելի լինի հղման միջոցով.

ա) արտադրման ամսաթիվը եւ վայրը,

բ) արտադրող ձեռնարկությունը,

գ) ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար օգտագործվող սարքը,

դ) արտադրության հերթափոխը կամ արտադրման ժամանակը,

ե) արտադրողի հետ չկապակցված սկզբնական հաճախորդի անունը, հաշիվ-ապրանքագիրը, պատվերի համարը եւ վճարման տվյալները,

- զ) մանրածախ վաճառքի նախատեսված շուկան,
- է) արտադրանքի նկարագրությունը,
- ը) պահեստավորման եւ բեռնափոխադրման ցանկացած տվյալ,
- թ) ցանկացած հաջորդ հայտնի գնորդի ինքնությունը, եւ
- ժ) բեռնափոխադրման նախատեսված երթուղին, բեռնափոխադրման ամսաթիվը, բեռնափոխադրման նպատակակետը, մեկնման վայրը եւ բեռն ստացողը:

4.2. «ա», «բ», «է» եւ առկայության դեպքում «զ» ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը եզակի նույնականացման նշումների մաս է կազմում:

4.3. Եթե նշում կատարելու ժամանակ «զ» ենթակետերով նախատեսված տեղեկատվությունն առկա չէ, ապա Կողմերը պահանջում են, որ այդ տեղեկատվությունը ներառվի Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15.2 հոդվածի «ա» կետի համաձայն:

5. Յուրաքանչյուր Կողմ սույն հոդվածով սահմանված ժամկետներում պահանջում է, որ 4-րդ կետով սահմանված տեղեկատվությունն արտադրողի կողմից գրանցվի արտադրության ժամանակ կամ առաջին բեռնափոխադրման ժամանակ կամ իր տարածք ներկրելու ժամանակ:

6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 5-րդ կետի համաձայն գրանցված տեղեկատվությունը հասանելի լինի այդ Կողմին՝ 3-րդ եւ 4-րդ կետերով պահանջվող եզակի նույնականացման նշումներով՝ հղման միջոցով:

7. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ 5-րդ կետի համաձայն գրանցված տեղեկատվությունը, ինչպես նաեւ 6-րդ կետի համաձայն՝ այդ տեղեկատվությունը հասանելի դարձնող եզակի նույնականացման նշումները ներառվեն Կողմի եւ նրա իրավասու մարմինների կողմից սահմանված կամ թույլատրված ձեւաչափով:

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հարցման դեպքում 5-րդ կետի համաձայն գրանցված տեղեկատվությունը 9-րդ կետի պայմանների պահպանմամբ հասանելի լինի տեղեկատվության փոխանակման համաշխարհային համակարգող մարմնին՝ իր ազգային եւ (կամ) տարածաշրջանային կենտրոնական մարմնում գործող էլեկտրոնային ապահով ստանդարտ միջերեսի միջոցով: Տեղեկատվության փոխանակման համաշխարհային համակարգող մարմինը կազմում է Կողմերի իրավասու մարմինների ցուցակ եւ ցուցակը հասանելի է դարձնում բոլոր Կողմերին:
9. Յուրաքանչյուր Կողմ կամ իրավասու մարմին՝
 - ա) պետք է ժամանակին հասանելիություն ունենա 4-րդ կետում նշված տեղեկատվությանը՝ հարցում կատարելով տեղեկատվության փոխանակման համաշխարհային համակարգող մարմնին,
 - բ) դիմում է այդպիսի տեղեկատվություն ստանալու պահանջով, միայն եթե դա անհրաժեշտ է ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի հայտնաբերման կամ քննության համար,
 - գ) անհիմն կերպով չի թաքցնում տեղեկատվությունը,
 - դ) պատասխանում է 4-րդ կետի առնչությամբ տեղեկատվություն ստանալու պահանջով դիմումներին իր ազգային օրենսդրությանը համապատասխան, եւ
 - ե) պետք է փոխադարձաբար համաձայնեցված կարգով պաշտպանի ցանկացած փոխանակվող տեղեկատվություն եւ պահպանի դրա գաղտնիությունը:
10. Յուրաքանչյուր Կողմ պահանջում է հետեւելու եւ հետագծելու կիրառելի համակարգի հետագա զարգացում եւ ընդգրկման շրջանակի ընդլայնում այնքան, մինչեւ որ բոլոր տուրքերը, համապատասխան հարկերը եւ ըստ անհրաժեշտության՝ մյուս պարտավորությունները կատարվեն արտադրության, ներմուծման կամ մաքսազերծման կամ ակցիզային հսկողության ժամանակ:

11. Կողմերը փոխադարձաբար համաձայնեցված կարգով համագործակցում են միմյանց եւ իրավասու միջազգային կազմակերպությունների հետ հետեւելու եւ հետագծելու համակարգերի վերաբերյալ լավագույն գործելակերպերի փոխանակման եւ մշակման, այդ թվում՝ հետեւյալ հարցերում.
 - ա) հետեւելու եւ հետագծելու բարելավված տեխնոլոգիայի, այդ թվում՝ գիտելիքների, հմտությունների, կարողությունների եւ փորձի զարգացման, փոխանակման եւ ձեռքբերման դյուրացում,
 - բ) աջակցություն Կողմերին վերապատրաստման եւ կարողությունների զարգացման ծրագրերի առնչությամբ, որոնք հայտնում են դրա անհրաժեշտության մասին, եւ
 - գ) տեխնոլոգիայի հետագա մշակում՝ 4-րդ կետում թվարկվող տեղեկատվությունը հասանելի դարձնելու նպատակով ծխախոտային արտադրատեսակների միավոր կապոցների եւ փաթեթների վրա նշումներ կատարելու եւ դրանք սքանավորելու համար:
12. Կողմի վրա դրված պարտավորությունները չպետք է կատարվեն ծխախոտի արդյունաբերության կողմից կամ պատվիրակվեն նրան:
13. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր իրավասու մարմինները հետեւելու եւ հետագծելու ռեժիմին իրենց մասնակցության ժամանակ փոխգործակցեն ծխախոտի արդյունաբերության եւ ծխախոտի արդյունաբերության շահերը ներկայացնողների հետ միայն այնքանով, որքանով որ խիստ անհրաժեշտ է սույն հոդվածը կիրարկելիս:
14. Յուրաքանչյուր Կողմ կարող է պահանջել, որ ծխախոտի արդյունաբերությունը կրի սույն հոդվածով սահմանված այդ Կողմի պարտավորությունների հետ կապված ծախսերը:

ՀՈԴՎԱԾ 9

Տվյալներ վարելը

1. Յուրաքանչյուր Կողմ պահանջում է, ըստ անհրաժեշտության, որ ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների մատակարարման շղթայում ներգրավված բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք վարեն բոլոր համապատասխան գործարքների վերաբերյալ ամբողջական եւ ճշգրիտ տվյալներ: Այդ տվյալները պետք է ապահովեն իրենց ծխախոտային արտադրատեսակների արտադրության մեջ օգտագործված նյութերի ամբողջական հաշվետվողականությունը:
2. Համապատասխան դեպքերում յուրաքանչյուր Կողմ 6-րդ հոդվածի համաձայն լիցենզավորված անձանցից պահանջում է հարցման դեպքում իրավասու մարմիններին տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.
 - ա) ընդհանուր տեղեկատվություն շուկայի ծավալների, միտումների, կանխատեսումների վերաբերյալ եւ այլ համապատասխան տեղեկատվություն,
 - բ) լիցենզավորված անձի տրամադրության, պահառության կամ հսկողության տակ գտնվող ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների քանակները, որոնք հարցման օրվա դրությամբ պահվում են պահեստում, հարկային եւ մաքսային պահեստներում տարանցման կամ փոխաբեռնման կամ մաքսատուրքի ժամանակավոր կասեցման ռեժիմի ներքո:
3. Յուրաքանչյուր Կողմ այն ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների առնչությամբ, որոնք արտահանման նպատակով վաճառվում կամ արտադրվում են Կողմի տարածքում կամ ենթակա են մաքսատուրքի ժամանակավոր կասեցման՝ Կողմի տարածքում տարանցման կամ փոխաբեռնման ժամանակ, համապատասխան դեպքերում պահանջում է, որ 6-րդ հոդվածի համաձայն լիցենզավորված

անձինք իրենց հսկողությունից դուրս գալու պահին մեկնման երկրի իրավասու մարմիններին պահանջի դեպքում տրամադրեն (էլեկտրոնային եղանակով, որտեղ առկա է ենթակառուցվածքը) հետեւյալ տեղեկատվությունը.

ա) արտադրատեսակների ֆիզիկական հսկողության վերջին կետից բեռնառաքման ամսաթիվը,

բ) բեռնառաքվող արտադրատեսակներին վերաբերող տվյալները (ներառյալ՝ ապրանքանիշը, քանակը, պահեստը),

գ) նախատեսված բեռնառաքման ուղիները եւ նպատակակետը,

դ) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի (անձանց) ինքնությունը, որոնց համար իրականացվում է արտադրատեսակների բեռնառաքումը,

ե) փոխադրման եղանակը, ներառյալ՝ փոխադրողի ինքնությունը,

զ) նախատեսված բեռնառաքման նպատակակետում բեռնառաքման ժամանման ակնկալվող ամսաթիվը, եւ

է) մանրաձախ վաճառքի կամ օգտագործման նախատեսված շուկան:

4. Իրագործելիության դեպքում յուրաքանչյուր Կողմ, համաձայն իր ազգային օրենսդրության, պահանջում է, որ մանրաձախ առևտրով զբաղվողները եւ ծխախոտ աճեցնողները, բացառությամբ ոչ առևտրային հիմունքներով աշխատող ավանդական աճեցնողների, ամբողջական եւ ճշգրիտ տվյալներ վարեն բոլոր այն համապատասխան գործարքների վերաբերյալ, որոնցում նրանք ներգրավվում են:

5. 1-ին կետի կատարման նպատակներով յուրաքանչյուր Կողմ ընդունում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ՝ պահանջելու համար, որ բոլոր տվյալները՝

ա) պահպանվեն առնվազն չորս տարի ժամկետով,

- բ) հասանելի դարձվեն իրավասու մարմիններին, եւ
 - գ) պահպանվեն իրավասու մարմինների կողմից պահանջվող ձեւաչափով:
6. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան դեպքերում եւ ազգային օրենսդրության պահպանմամբ ստեղծում է սույն հոդվածի համաձայն պահվող բոլոր տվյալների մեջ պարունակվող մանրամասների՝ այլ Կողմերի հետ փոխանակման համակարգ:
7. Կողմերը ձգտում են համագործակցել միմյանց եւ իրավասու միջազգային կազմակերպությունների հետ տվյալների վարման բարելավված համակարգերի աստիճանաբար փոխանակման եւ զարգացման հարցում:

ՀՈԴՎԱԾ 10

Անվտանգության եւ կանխարգելիչ միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան դեպքերում, իր ազգային օրենսդրությանը եւ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի նպատակներին համապատասխան, պահանջում է, որ բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք 6-րդ հոդվածի դրույթների պահպանմամբ ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ կանխելու ծխախոտային արտադրատեսակների ուղղորդումը դեպի ապօրինի առևտրի ուղիներ, ներառյալ, *inter alia*.
- ա) իրավասու մարմիններին տեղեկացնելը հետեւյալի վերաբերյալ.
 - i) կանխիկ դրամի միջսահմանային փոխանցումն ազգային օրենսդրությամբ սահմանված չափերով կամ անդրսահմանային վճարումները բնեղենով, եւ
 - ii) բոլոր «կասկածելի գործարքները», եւ

- բ) ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների մատակարարումը միայն մանրածախ վաճառքի կամ օգտագործման համար նախատեսվող շուկայում նման արտադրատեսակների պահանջարկին համապատասխան քանակությամբ:
2. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան դեպքերում, իր ազգային օրենսդրությանը եւ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի նպատակներին համապատասխան, պահանջում է, որ 6-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից իրականացված գործարքների համար վճարումները թույլատրվեն միայն այն արժույթով եւ նույն չափով, ինչ հաշիվ-ապրանքագրում է, եւ միայն նախատեսվող շուկայի տարածքում գտնվող ֆինանսական հաստատություններից կատարվող վճարման օրինական եղանակներով եւ չպետք է կատարվեն դրամական փոխանցումների ցանկացած այլ այլընտրանքային համակարգի միջոցով:
 3. Յանկացած Կողմ կարող է պահանջել, որ իր իրավազրության շրջանակներում գտնվող ծխախոտային արտադրատեսակների արտադրության համար օգտագործվող նյութերի համար 6-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից կատարված վճարները թույլատրվեն միայն այն արժույթով եւ նույն չափով, ինչ հաշիվ-ապրանքագրում է, եւ միայն նախատեսվող շուկայի տարածքում գտնվող ֆինանսական հաստատություններից կատարվող վճարման օրինական եղանակներով եւ չպետք է կատարվեն դրամական փոխանցումների ցանկացած այլ այլընտրանքային համակարգի միջոցով:
 4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն հոդվածի պահանջների ցանկացած խախտման առնչությամբ կիրառվեն համապատասխան քրեական, քաղաքացիական կամ վարչական ընթացակարգեր եւ արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության

միջոցներ, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում լիցենզիայի կասեցում կամ չեղարկում:

ՀՈԴՎԱԾ 11

Համացանցի, հեռահաղորդակցության կամ ցանկացած այլ զարգացող տեխնոլոգիաների միջոցով վաճառքը

1. Յուրաքանչյուր Կողմ պահանջում է, որ համացանցի, հեռահաղորդակցության կամ ցանկացած այլ զարգացող տեխնոլոգիայի վրա հիմնված վաճառքի ձեւերի միջոցով կատարվող՝ ծխախոտային արտադրատեսակների մասով ցանկացած գործարքում ներգրավված բոլոր իրավաբանական եւ ֆիզիկական անձինք կատարեն սույն արձանագրությամբ նախատեսված բոլոր համապատասխան պարտավորությունները:
2. Յուրաքանչյուր Կողմ քննության է առնում համացանցի, հեռահաղորդակցության կամ ցանկացած այլ զարգացող տեխնոլոգիայի վրա հիմնված վաճառքի ձեւերի միջոցով իրականացվող՝ ծխախոտային արտադրատեսակների մանրածախ վաճառքն արգելելը:

ՀՈԴՎԱԾ 12

Ազատ գոտիները եւ միջազգային տարանցիկ փոխադրումը

1. Յուրաքանչյուր Կողմ այդ Կողմի համար սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում արդյունավետ հսկողություն է իրականացնում ազատ գոտիներում ծխախոտի եւ ծխախոտային արտադրատեսակների արտադրության եւ դրանց հետ կապված գործարքների նկատմամբ՝ օգտագործելով սույն արձանագրությամբ նախատեսված բոլոր համապատասխան միջոցները:

2. Բացի այդ, արգելվում է ազատ գոտիներից տեղափոխելու ժամանակ ծխախոտային արտադրատեսակները ոչ ծխախոտային արտադրատեսակների հետ մեկ տարայում կամ ցանկացած այլ նմանատիպ փոխադրման միավորի մեջ միախառնելը:
3. Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության համաձայն ընդունում եւ կիրառում է հսկողության եւ ստուգման միջոցներ իր տարածքում ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների միջազգային տարանցման կամ փոխաբեռնման նկատմամբ՝ սույն արձանագրության դրույթներին համապատասխան՝ կանխելու այդ արտադրատեսակների ապօրինի առետուրը:

ՀՈԴՎԱԾ 13

Անմաքս վաճառքը

1. Յուրաքանչյուր Կողմ իրականացնում է արդյունավետ միջոցներ, որպեսզի ցանկացած անմաքս վաճառքի վրա տարածվեն սույն արձանագրության բոլոր համապատասխան դրույթները՝ հաշվի առնելով Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածը:
2. Սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան հինգ տարի հետո Կողմերի ժողովն իր հաջորդ նստաշրջանում պետք է ապահովի ապացույցների վրա հիմնված հետազոտությունների անցկացում՝ պարզելու ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առետրի ծավալը՝ կապված այդ արտադրատեսակների անմաքս վաճառքի հետ: Հիմնվելով այդ հետազոտության վրա՝ Կողմերի ժողովը քննարկում է հետագա համապատասխան գործողությունները:

ՄԱՍ IV. ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 14

Ոչ իրավաչափ վարքագիծը, ներառյալ՝ հանցագործությունները

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական օրենսդրության հիմնական սկզբունքներին համապատասխան, ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ վարքագծի հետեւյալ բոլոր տեսակներն իր ներպետական օրենսդրությամբ որպես անօրինական սահմանելու համար.
 - ա) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների արտադրությունը, մեծածախ առևտուրը, բրոքերությունը, վաճառքը, փոխադրումը, բաշխումը, պահեստավորումը, բեռնառաքումը, ներկրումը կամ արտահանումը՝ ի հակասումն սույն արձանագրության դրույթների,
 - բ) i) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների արտադրությունը, մեծածախ առևտուրը, բրոքերությունը, վաճառքը, փոխադրումը, բաշխումը, պահեստավորումը, բեռնառաքումը, ներկրումը կամ արտահանումը՝ առանց կիրառելի տուրքերի, հարկերի եւ այլ գանձումների վճարման կամ առանց կիրառելի հարկաբյուջետային դրոշմանիշներ, եզակի նույնականացման նշումներ կամ որեւէ այլ անհրաժեշտ մակնշում կամ պիտակ կրելու,
 - ii) «բ» կետի (i) ենթակետով չնախատեսված ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների մաքսանենգության ցանկացած այլ գործողություն կամ մաքսանենգության փորձ,

- գ) i) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի արտադրության ցանկացած այլ ձեւ կամ ծխախոտի փաթեթավորում, որը կրում է կեղծ հարկաբյուջետային դրոշմանիշներ, եզակի նույնականացման նշումներ կամ այլ անհրաժեշտ մակնշում կամ պիտակ,
- ii) ապօրինի կերպով արտադրված ծխախոտի, անօրինական ծխախոտային արտադրատեսակների, կեղծ հարկաբյուջետային դրոշմանիշներ եւ (կամ) այլ անհրաժեշտ մակնշումներ կամ պիտակներ կրող արտադրատեսակների մեծածախ առևտուրը, բրոքերությունը, վաճառքը, փոխադրումը, բաշխումը, պահեստավորումը, բեռնառաքումը, ներկրումը կամ արտահանումը կամ սարքավորումների ապօրինի արտադրությունը,
- դ) մատակարարման շղթայում հետագա ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակները ոչ ծխախոտային արտադրատեսակների հետ միախառնելը՝ ծխախոտային արտադրատեսակները թաքցնելու կամ քողարկելու նպատակով.
- ե) ծխախոտային արտադրատեսակները ոչ ծխախոտային արտադրատեսակների հետ միախառնելը՝ ի հակասումն սույն արձանագրության 12.2 հոդվածի պահանջի,
- զ) համացանցի, հեռահաղորդակցության կամ ցանկացած այլ զարգացող տեխնոլոգիայի վրա հիմնված ձեւերի միջոցով ծխախոտային արտադրատեսակների վաճառքի օգտագործումը՝ ի հակասումն սույն արձանագրության պահանջների,
- է) 6-րդ հոդվածի համաձայն լիցենզավորված անձի կողմից ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական

սարքավորումների ձեռքբերումն անձից, որը պետք է լիցենզավորված լինի 6-րդ հոդվածի համաձայն, սակայն լիցենզավորված չէ,

- ը) ցանկացած պետական պաշտոնատար անձի կամ լիազորված պաշտոնյայի՝ ծխախոտի, ծխախոտի արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի կանխարգելման, կանխման, հայտնաբերման, քննության կամ վերացման հետ կապված պարտականությունների կատարմանը խոչընդոտելը,
- թ) i) ցանկացած էական հայտարարություն ներկայացնելը, որը սխալ է, մոլորեցնող կամ ոչ ամբողջական, կամ անհրաժեշտ տեղեկատվությունը ցանկացած պետական պաշտոնատար անձի կամ լիազորված պաշտոնյայի չտրամադրելը՝ ծխախոտի, ծխախոտի արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի կանխարգելման, կանխման, հայտնաբերման, քննության կամ վերացման հետ կապված պարտականությունները կատարելիս, եւ երբ դա չի հակասում իր դեմ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքին,
- ii) պաշտոնական ձեւաթղթերում ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների նկարագրությունը, քանակը կամ արժեքը կամ արձանագրության մեջ նշված ցանկացած այլ տեղեկատվություն թերի ներկայացնելը՝
- ա) խուսափելու համար կիրառելի տուրքերի, հարկերի եւ այլ գանձումների վճարումից, կամ
- բ) խոչընդոտելու համար ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի կանխարգելմանը, կանխմանը, հայտնաբերմանը, քննությանը կամ վերացմանն ուղղված հսկողության ցանկացած միջոցները,

iii) սույն արձանագրությամբ նախատեսված տվյալներ չստեղծելը կամ չվարելը կամ սխալ տվյալներ վարելը, եւ

ժ) 2-րդ կետի համաձայն՝ որպէս հանցագործություն սահմանված ոչ իրավաչափ վարքագծից ստացված եկամուտների լվացումը:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական օրենսդրության հիմնական սկզբունքներին համապատասխան, որոշում է, թե 1-ին կետում նշված ոչ իրավաչափ որ վարքագիծը կամ սույն արձանագրության դրույթներին հակասող ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ապօրինի առետրին վերաբերող ցանկացած այլ վարքագիծ է համարվում հանցագործություն, եւ ընդունում է օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել այդ որոշումը գործողության մեջ դնելու համար:
3. Յուրաքանչյուր Կողմ ծանուցում է սույն արձանագրության Քարտուղարությանն այն մասին, թե 1-ին եւ 2-րդ կետերում նշված ոչ իրավաչափ որ վարքագիծն է Կողմը սահմանել որպէս հանցագործություն 2-րդ կետին համապատասխան, եւ Քարտուղարությանն է տրամադրում իր օրենքների պատճենները կամ դրանց նկարագրությունը, որոնք գործողության մեջ են դնում 2-րդ կետը, ինչպէս նաեւ այդ օրենքներում կատարվող ցանկացած հետագա փոփոխություն:
4. Ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ապօրինի առետրին վերաբերող հանցագործությունների դեմ պայքարում միջազգային համագործակցությունն ընդլայնելու նպատակով Կողմերին խրախուսվում է վերանայել իրենց ազգային օրենքները, որոնք վերաբերում են փողերի լվացմանը, փոխադարձ իրավական օգնությանն ու հանձնմանը՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային կոնվենցիաները, որոնց իրենք անդամակցում են որպէս Կողմ՝ ապահովելու դրանց արդյունավետությունը սույն արձանագրության դրույթների կատարման հարցում:

ՀՈԴՎԱԾ 15

Իրավաբանական անձանց պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք, իր իրավական սկզբունքների համաձայն, կարող են անհրաժեշտ լինել իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար՝ ապօրինի վարքագծի դրսևորման, այդ թվում՝ սույն արձանագրության 14-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների կատարման համար:
2. Նկատի ունենալով յուրաքանչյուր Կողմի իրավական սկզբունքները՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:
3. Նման պատասխանատվությունը չպետք է հակասի ապօրինի վարքագիծ դրսևորած կամ ազգային օրենքներով ու կանոնակարգերով եւ սույն արձանագրության 14-րդ հոդվածով սահմանված հանցագործությունները կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությանը:

ՀՈԴՎԱԾ 16

Գործով հետապնդումը եւ պատասխանատվության միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ազգային օրենսդրությանը համապատասխան, ընդունում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովելու համար, որ ոչ իրավաչափ վարքագծի, այդ թվում՝ 14-րդ հոդվածին համապատասխան սահմանված հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ քրեական եւ ոչ քրեական պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ դրամական բնույթի պատասխանատվության միջոցներ:

2. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել, որ իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված ցանկացած հայեցողական օրինական լիազորություն, որը վերաբերում է ոչ իրավաչափ վարքագծի, այդ թվում՝ 14-րդ հոդվածին համապատասխան սահմանված հանցագործությունների համար անձանց հետապնդմանը, իրականացվի՝ առավելագույնի հասցնելու համար կիրարկման միջոցների արդյունավետությունը նման ոչ իրավաչափ վարքագծի, այդ թվում՝ հանցագործությունների առնչությամբ, պատշաճ կերպով հաշվի առնելով նման ոչ իրավաչափ վարքագծի, ներառյալ՝ հանցագործությունների կատարումը կանխելու անհրաժեշտությունը:
3. Սույն արձանագրության մեջ ոչինչ չի ազդում այն սկզբունքի վրա, որ ոչ իրավաչափ վարքագծի, այդ թվում՝ սույն արձանագրության համաձայն սահմանված հանցագործությունների, ինչպես նաև կիրառելի իրավական պաշտպանության կամ վարքագծի օրինականությունը վերահսկող այլ իրավական սկզբունքների նկարագրությունը վերապահված է Կողմի ներպետական օրենսդրությանը, եւ որ նման ոչ իրավաչափ վարքագիծը, ներառյալ՝ հանցագործությունները, պետք է քրեորեն հետապնդվեն եւ պատժվեն այդ օրենքին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 17

Առգրավման համար վճարումները

Կողմերը, իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան, պետք է քննության առնեն այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցների ընդունումը, որոնք կարող են անհրաժեշտ լինել լիազորելու համար իրավասու մարմիններին գանձել բաց թողնված հարկերին եւ տուրքերին համաչափ գումար առգրավված ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ (կամ) արտադրական սարքավորումների արտադրողից, պատրաստողից, բաշխողից, ներկրողից կամ արտահանողից:

ՀՈԴՎԱԾ 18

Տնօրինումը կամ ոչնչացումը

Բռնագրավված ամբողջ ծխախոտը, ծխախոտային արտադրատեսակները եւ արտադրական սարքավորումները ոչնչացվում են՝ հնարավորինս օգտագործելով շրջակա միջավայրը չվնասող մեթոդներ, կամ տնօրինվում են՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 19

Քննության իրականացման հատուկ հնարքները

1. Ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի դեմ արդյունավետ պայքարելու նպատակով յուրաքանչյուր Կողմ, այնքանով, որքանով դա թույլատրվում է նրա ներպետական իրավական համակարգի հիմնարար սկզբունքներով, իր հնարավորությունների սահմաններում եւ իր ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններով ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, որոնք կթույլատրեն իր տարածքում իր իրավասու մարմինների կողմից՝ վերահսկվող մատակարարումներից պատշաճորեն օգտվելը եւ այն դեպքերում, երբ նպատակահարմար է համարում, քննության իրականացման այլ հատուկ հնարքներից օգտվելը, ինչպիսիք են էլեկտրոնային հսկողությունը կամ հսկողության մյուս ձեւերն ու գաղտնի գործողությունները:
2. 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների քննության նպատակներով Կողմերին խրախուսվում է անհրաժեշտության դեպքում կնքել համապատասխան երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ՝ 1-ին կետում նշված հնարքները միջազգային մակարդակով համագործակցության համատեքստում օգտագործելու համար:

3. 2-րդ կետում նշված համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների բացակայության պարագայում միջազգային մակարդակով քննության իրականացման այդպիսի հատուկ հնարքների վերաբերյալ որոշումները կայացվում են յուրաքանչյուր դեպքի համար առանձին, եւ կարող են անհրաժեշտության դեպքում հաշվի առնել շահագրգիռ Կողմերի կողմից իրավազրության իրականացման առնչությամբ ֆինանսական պայմանավորվածություններն ու փոխըմբռնումները:
4. Կողմերն ընդունում են այս ոլորտում միջազգային համագործակցության եւ օգնության կարելիությունը եւ անհրաժեշտությունը եւ համագործակցում են միմյանց եւ միջազգային կազմակերպությունների հետ սույն հոդվածի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կարողությունների զարգացման հարցում:

ՄԱՍ V ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 20

Ընդհանուր տեղեկատվության փոխանակումը

1. Սույն արձանագրության նպատակներին հասնելու համար Կողմերը, որպես Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի հաշվետվողականության գործիքի մաս, ներպետական օրենսդրության համաձայն, անհրաժեշտության դեպքում զեկուցում են համապատասխան տեղեկատվություն, *inter alia*, հետևյալ հարցերի մասին.
 - ա) համահավաք ձեռով՝ ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների առգրավման մանրամասները, քանակը, առգրավումների արժեքը, արտադրատեսակների նկարագրությունները, արտադրության ամսաթվերն ու վայրերը, ինչպես նաև հարկերը, որոնցից խուսափել են,
 - բ) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ներկրումը, արտահանումը, տարանցումը, վճարված հարկերով եւ անմաքս վաճառքը եւ արտադրության քանակը կամ արժեքը,
 - գ) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի մեջ օգտագործվող միտումները, թաքցնելու մեթոդները եւ գործելակերպերը, եւ
 - դ) ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն՝ Կողմերի կողմից համաձայնեցված կարգով:
2. Կողմերը համագործակցում են միմյանց եւ իրավասու միջազգային կազմակերպությունների հետ տեղեկատվության հավաքման եւ փոխանակման մասով Կողմերի կարողությունների զարգացման հարցում:

3. Կողմերը նշված տեղեկատվությունը համարում են գաղտնի եւ նախատեսված միայն Կողմերի օգտագործման համար, եթե փոխանցող Կողմի կողմից այլ բան նախատեսված չէ:

ՀՈԴՎԱԾ 21

Կիրարկման վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը

1. Կողմերը, ներպետական օրենսդրության կամ ցանկացած կիրառելի միջազգային պայմանագրերի համաձայն, համապատասխան դեպքերում իրենց սեփական նախաձեռնությամբ կամ այն Կողմի պահանջով, որը պատշաճ հիմնավորում է տրամադրում այն մասին, որ այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առետրի հայտնաբերման կամ քննության համար, փոխանակում են հետեւյալ տեղեկատվությունը.
 - ա) շահագրգիռ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց լիցենզավորման տվյալները,
 - բ) տեղեկատվություն ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առետրի մեջ ներգրավված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նույնականացման, դիտանցման եւ հետապնդման վերաբերյալ,
 - գ) քննության իրականացման եւ գործով հետապնդման վերաբերյալ տվյալներ,
 - դ) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ներկրման, արտահանման կամ անմաքս վաճառքի համար վճարման տվյալները, եւ

- ե) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների առգրավման տվյալները (այդ թվում՝ դեպքի մասին տեղեկատվությունը՝ ըստ անհրաժեշտության, քանակը, առգրավման արժեքը, արտադրանքի նկարագրությունը, ներգրավված սուբյեկտները, արտադրության ամսաթիվը եւ վայրը) եւ գործելակերպերը (այդ թվում՝ փոխադրամիջոցները, թաքցնելը, երթուղու սահմանումը եւ հայտնաբերումը):
2. Սույն հոդվածի համաձայն՝ Կողմերից ստացված տեղեկատվությունն օգտագործվում է բացառապես սույն արձանագրության նպատակների իրագործման համար: Կողմերը կարող են նշել, որ նման տեղեկատվությունը չի կարող փոխանցվել առանց տեղեկատվությունը տրամադրած Կողմի համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 22

Տեղեկատվության փոխանակում. գաղտնիությունը եւ տեղեկատվության պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է իրավասու ազգային մարմիններ, որոնց պետք է ներկայացվեն 20-րդ, 21-րդ եւ 24-րդ հոդվածներում նշված տվյալները, եւ Կոնվենցիայի քարտուղարության միջոցով ծանուցում է Կողմերին այդ նշանակման մասին:
2. Սույն արձանագրության համաձայն՝ տեղեկատվության փոխանակման վրա տարածվում է գաղտնիության եւ մասնավոր կյանքի վերաբերյալ ներպետական օրենսդրությունը: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պաշտպանում են ցանկացած գաղտնի տեղեկատվություն, որն իրենք փոխանակում են:

ՀՈԴՎԱԾ 23

Աջակցությունը եւ համագործակցությունը. Վերապատրաստումը, տեխնիկական աջակցությունը եւ համագործակցությունը գիտական, տեխնիկական եւ տեխնոլոգիական հարցերում

1. Կողմերը համագործակցում են միմյանց հետ եւ (կամ) իրավասու միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով՝ գիտական, տեխնիկական եւ տեխնոլոգիական հարցերում վերապատրաստումների, տեխնիկական օգնության տրամադրման եւ համագործակցության շուրջ՝ փոխադարձաբար համաձայնեցված կարգով սույն արձանագրության նպատակներին հասնելու համար: Այդ օգնությունը կարող է ներառել փորձաքննության կամ համապատասխան տեխնոլոգիաների փոխանցում տեղեկատվության հավաքման, իրավապահ մարմինների գործունեության, հետետելու եւ հետազոծելու, տեղեկատվության կառավարման, անձնական տվյալների պաշտպանության, արգելանքի, էլեկտրոնային հսկողության, դատական փորձագիտական վերլուծության, փոխադարձ իրավական օգնության եւ հանձնման ոլորտներում:
2. Կողմերը, ըստ անհրաժեշտության, կարող են կնքել երկկողմ, բազմակողմ կամ ցանկացած այլ համաձայնագրեր կամ ձեռք բերել պայմանավորվածություններ՝ խթանելու գիտական, տեխնիկական եւ տեխնոլոգիական հարցերում վերապատրաստումները, տեխնիկական օգնությունը եւ համագործակցությունը՝ հաշվի առնելով զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի կարիքները:
3. Կողմերը, ըստ անհրաժեշտության, համագործակցում են՝ զարգացնելու եւ ուսումնասիրելու առգրավված ծխախոտի եւ ծխախոտային արտադրատեսակների ճշգրիտ աշխարհագրական ծագումը բացահայտելու հնարավորությունները:

ՀՈԴՎԱԾ 24

Աջակցությունը եւ համագործակցությունը. իրավախախտումների քննություն եւ գործով հետապնդում իրականացնելը

1. Կողմերը, իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան, ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ըստ անհրաժեշտության բազմակողմ, տարածաշրջանային կամ երկկողմ պայմանավորվածությունների միջոցով ամրապնդելու համագործակցությունը՝ ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի մեջ ներգրավված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասով կանխարգելման, հայտնաբերման, քննության, հետապնդման եւ պատժի նպատակով:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի դեմ պայքարով զբաղվող վարչական, կարգավորող, իրավապահ եւ այլ մարմիններ (դատական մարմինները ներառյալ, եթե թույլատրվում է ներպետական օրենսդրությամբ) համագործակցեն եւ փոխանակեն համապատասխան տեղեկատվությունն ազգային եւ միջազգային մակարդակներում՝ իր ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 25

Ինքնիշխանության պաշտպանությունը

1. Կողմերը, սույն արձանագրության համաձայն, իրենց պարտավորություններն իրականացնում են պետությունների ինքնիշխան հավասարության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների եւ այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին համապատասխան:

2. Սույն արձանագրության մեջ ոչինչ Կողմին չի օժտում մյուս պետության տարածքում այնպիսի իրավասություն եւ գործառույթներ իրականացնելու իրավունքով, որոնք մտնում են բացառապես այդ մյուս պետության մարմինների իրավասության մեջ՝ նրա ներպետական օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 26

Իրավագործությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 14-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների նկատմամբ իր իրավագործությունը սահմանելու համար, երբ՝
 - ա) հանցագործությունը կատարվել է այդ Կողմի տարածքում, կամ
 - բ) հանցագործությունը կատարվել է նավի վրա, որը հանցագործությունը կատարելու պահին կրել է այդ Կողմի դրոշը, կամ օդանավի վրա, որն այդ պահին գրանցված է եղել այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան:
2. 25-րդ հոդվածի համաձայն Կողմը կարող է իր իրավագործությունը սահմանել նաեւ ցանկացած հանցագործության նկատմամբ, երբ՝
 - ա) հանցագործությունը կատարվել է այդ Կողմի դեմ,
 - բ) հանցագործությունը կատարվել է այդ Կողմի քաղաքացու կողմից կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից, որը սովորաբար բնակվում է նրա տարածքում, կամ
 - գ) հանցագործությունը համարվում է 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործություններից մեկը եւ կատարվել է նրա տարածքից դուրս՝ նրա տարածքում 14-րդ հոդվածի համաձայն սահմանված որեւէ հանցագործություն կատարելու նպատակով:

3. 30-րդ հոդվածի նպատակներով յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների նկատմամբ իր իրավազորությունը սահմանելու համար, երբ ենթադրյալ իրավախախտը գտնվում է իր տարածքում, եւ ինքն այդ անձին չի հանձնում միայն այն հիմքով, որ նա հանդիսանում է իր քաղաքացիներից մեկը:
4. Յուրաքանչյուր Կողմ կարող է ձեռնարկել նաեւ այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների նկատմամբ իր իրավազորությունը սահմանելու համար, երբ ենթադրյալ իրավախախտը գտնվում է իր տարածքում, եւ ինքը չի հանձնում այդ անձին:
5. Եթե 1-ին կամ 2-րդ կետերին համապատասխան իր իրավազորությունն իրականացնող Կողմը ծանուցվում է կամ որեւէ այլ եղանակով տեղեկանում է այն մասին, որ մեկ կամ մի քանի այլ Կողմեր քննություն, հետապնդում կամ դատաքննություն են իրականացնում այդ նույն արարքի կապակցությամբ, ապա այդ Կողմերի իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում միմյանց հետ խորհրդատվություններ են անցկացնում իրենց գործողությունները համակարգելու նպատակով:
6. Չխախտելով ընդհանուր միջազգային իրավունքի նորմերը՝ սույն արձանագրությամբ չի բացառվում Կողմի կողմից իր ներպետական օրենսդրությանը համապատասխան սահմանված ցանկացած քրեական իրավազորություն իրականացնելը:

ՀՈԴՎԱԾ 27

Համագործակցությունը իրավապահ մարմինների հետ

1. Յուրաքանչյուր Կողմ, համաձայն իր համապատասխան ներպետական իրավական եւ վարչական համակարգերի, ընդունում է արդյունավետ միջոցներ, որպեսզի՝

- ա) ընդլայնի կամ անհրաժեշտության դեպքում տեղադրի իրավասու մարմինների, գերատեսչությունների եւ ծառայությունների միջեւ հաղորդակցության ուղիներ՝ 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների բոլոր ասպեկտներին վերաբերող տեղեկատվության անվտանգ եւ արագ փոխանակումը դյուրացնելու նպատակով,
- բ) ապահովի արդյունավետ համագործակցություն իրավասու մարմինների, գերատեսչությունների, մաքսային մարմինների, ոստիկանության եւ այլ իրավապահ մարմինների միջեւ,
- գ) համագործակցի այլ Կողմերի հետ 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների կոնկրետ գործերով այնպիսի հարցումներ կատարելու գործում, որոնք վերաբերում են՝
 - i) այդպիսի հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց ինքնությանը, գտնվելու վայրին եւ գործունեությանը կամ առնչություն ունեցող այլ անձանց գտնվելու վայրին,
 - ii) հանցագործություններից ստացված եկամուտների կամ այդպիսի հանցագործությունների կատարման արդյունքում ստացված գույքի տեղափոխմանը, եւ
 - iii) գույքի, սարքավորումների կամ այլ գործիքների տեղափոխմանը, որոնք օգտագործվել են կամ նախատեսված են եղել օգտագործվելու այդպիսի հանցագործությունների կատարման համար,
- դ) անհրաժեշտության դեպքում տրամադրի անհրաժեշտ իրեր կամ նյութերի քանակություններ՝ վերլուծական կամ քննության իրականացման նպատակներով,
- ե) դյուրացնի իր իրավասու մարմինների, գերատեսչությունների եւ ծառայությունների միջեւ արդյունավետ համակարգումը եւ նպաստի

աշխատակիցների ու այլ փորձագետների փոխանակմանը, այդ թվում՝ շահագրգիռ Կողմերի միջև երկկողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների համաձայն՝ կապն ապահովող աշխատակիցների նշանակմանը,

զ) փոխանակի համապատասխան տեղեկատվություն այլ Կողմերի հետ այդ հանցագործությունների կատարման ժամանակ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից օգտագործված որոշակի միջոցների եւ մեթոդների, ներառյալ ըստ կիրառելիության՝ երթուղիների եւ տրանսպորտային փոխադրման, ինչպես նաեւ անձը հաստատող կեղծ տվյալների, փոփոխված կամ կեղծ փաստաթղթերի կամ իրենց գործունեությունը թաքցնելու այլ միջոցների օգտագործման վերաբերյալ, եւ

է) փոխանակի համապատասխան տեղեկատվություն եւ համապատասխան դեպքերում համակարգի 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունները վաղ բացահայտելու նպատակով ձեռնարկված վարչական եւ այլ միջոցներ:

2. Սույն արձանագրությունը գործողության մեջ դնելու նպատակով Կողմերը քննարկում են իրենց իրավապահ մարմինների միջև անմիջական համագործակցության մասին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ կնքելու, իսկ եթե այդպիսի համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ արդեն գոյություն ունեն՝ համապատասխանաբար դրանցում փոփոխություններ կատարելու հարցը: Շահագրգիռ Կողմերի միջև այդպիսի համաձայնագրերի եւ պայմանավորվածությունների բացակայության դեպքում Կողմերը սույն արձանագրությունը կարող են դիտել որպես իրավապահ մարմինների միջև փոխադարձ համագործակցության հիմք սույն արձանագրությամբ կանոնակարգվող հանցագործությունների կապակցությամբ: Անհրաժեշտության դեպքում Կողմերն ամբողջությամբ օգտագործում են

համաձայնագրերը կամ պայմանավորվածությունները, այդ թվում՝ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունները՝ իրենց իրավապահ մարմինների միջև համագործակցությունն ընդլայնելու համար:

3. Կողմերը ձգտում են իրենց հնարավորությունների սահմաններում համագործակցել՝ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող ծխախոտային արտադրատեսակների անդրազգային ապօրինի առևտրին արձագանքելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 28

Փոխադարձ վարչական աջակցությունը

Կողմերը, իրենց համապատասխան ներպետական իրավական եւ վարչական համակարգերի համաձայն, պահանջի դեպքում կամ իրենց սեփական նախաձեռնությամբ միմյանց տրամադրում են տեղեկատվություն՝ ապահովելու մաքսային եւ այլ համապատասխան օրենսդրության պատշաճ կիրառումը ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի կանխարգելման, հայտնաբերման, քննության, հետապնդման եւ դրա դեմ պայքարի մեջ: Կողմերը նշված տեղեկատվությունը համարում են գաղտնի եւ նախատեսում են սահմանափակ օգտագործման համար, եթե փոխանցող Կողմի կողմից այլ բան նախատեսված չէ: Այդ տեղեկատվությունը կարող է ներառել՝

- ա) հաստատված արդյունավետության նոր մաքսային եւ կիրարկման այլ հնարքներ,
- բ) ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի մեջ ներգրավման նոր միտումները, միջոցները կամ մեթոդները,

- գ) որպես ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների կամ արտադրական սարքավորումների ապօրինի առևտրի առարկա հայտնի ապրանքները, ինչպես նաև այդ ապրանքների նկարագրության, փաթեթավորման, փոխադրման եւ պահեստավորման մանրամասները, ինչպես նաև դրանց առնչությամբ օգտագործված մեթոդները,
- դ) ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց մասով հայտնի է, որ կատարել են 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործություններից որեւէ մեկը կամ մասնակցել են դրա կատարմանը, եւ
- ե) ցանկացած այլ տվյալ, որը կարող է օգնել նշանակված մարմիններին վերահսկողության եւ կիրարկման այլ նպատակներով ռիսկերի գնահատման հարցում:

ՀՈԴՎԱԾ 29

Փոխադարձ իրավական օգնությունը

1. Կողմերը պետք է լայնածավալ փոխադարձ իրավական օգնությունը ցույց տան միմյանց սույն արձանագրության 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների հետ կապված քննության, հետապնդման եւ դատաքննության հարցերում:
2. Փոխադարձ իրավական օգնությունը պետք է ցուցաբերվի հնարավորինս առավելագույն ծավալով, հայցվող Կողմի համապատասխան օրենքների, պայմանագրերի, համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների համաձայն այն իրավախախտումների հետ կապված քննության, հետապնդման եւ դատաքննության առնչությամբ, որոնց կատարման համար հայցող Կողմում կարող են պատասխանատվության ենթարկվել իրավաբանական անձինք՝ սույն արձանագրության 15-րդ հոդվածի համաձայն:

3. Սույն հոդվածի համաձայն տրամադրվող փոխադարձ իրավական օգնությունը կարող է հայցվել հետևյալ նպատակներից որեւէ մեկով.
- ա) առանձին անձանցից ցուցմունքներ կամ հայտարարություններ ստանալը.
 - բ) դատական փաստաթղթեր հանձնելը.
 - գ) խուզարկություն անցկացնելը եւ առգրավելը, ինչպես նաեւ գործառնությունները սառեցնելը.
 - դ) օբյեկտները եւ տեղանքի հատվածները զննելը.
 - ե) տեղեկատվություն, իրեղեն ապացույցներ եւ փորձագետների գնահատականներ տրամադրելը.
 - զ) համապատասխան փաստաթղթերի եւ նյութերի բնօրինակները կամ հաստատված պատճենները, ներառյալ՝ պետական, բանկային, ֆինանսական, կորպորատիվ կամ առևտրային փաստաթղթերը ներկայացնելը.
 - է) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները, գույքը, հանցագործության կատարման գործիքները կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ առարկաներ բացահայտելը կամ հետագծելը.
 - ը) հայցվող Կողմի տարածքում համապատասխան անձանց կամավոր ներկայանալը դյուրացնելը.
 - թ) ցանկացած այլ տեսակի օգնություն ցույց տալը, որը չի հակասում հայցվող Կողմի ներպետական օրենսդրությանը:
4. Սույն հոդվածը չպետք է ազդի ցանկացած այլ այնպիսի պայմանագրով՝ երկկողմ կամ բազմակողմ, սահմանված պարտավորությունների վրա, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարգավորում է կամ կարգավորելու է փոխադարձ իրավական օգնությունը:

5. 6-24-րդ կետերը փոխադարձության հիման վրա կիրառվում են սույն հոդվածի համաձայն ուղարկված պահանջով դիմումների նկատմամբ, եթե համապատասխան Կողմերը կապված չեն փոխադարձ իրավական օգնության մասին որեւէ պայմանագրով կամ միջկառավարական համաձայնագրով: Եթե Կողմերը կապված են այդպիսի պայմանագրով կամ միջկառավարական համաձայնագրով, ապա պետք է կիրառվեն այդ պայմանագրի կամ միջկառավարական համաձայնագրի համապատասխան դրույթները, եթե միայն Կողմերը չեն համաձայնում դրանց փոխարեն կիրառել 6-24-րդ կետերը: Կողմերին խիստ կոչ է արվում կիրառել այդ կետերը, եթե դրանք դյուրացնում են համագործակցությունը:
6. Կողմերը պետք է նշանակեն կենտրոնական մարմին, որը պատասխանատու է լիազորված կլինի ստանալու փոխադարձ օգնության պահանջով դիմումներ եւ կա՛մ ընթացք տա դրանց, կա՛մ փոխանցի դրանք համապատասխան իրավասու մարմիններին՝ կատարման համար:

Երբ որեւէ Կողմում կա հատուկ տարածաշրջան կամ տարածք՝ փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու առանձին համակարգով, ապա նա կարող է նշանակել հատուկ կենտրոնական մարմին, որը կկատարի այդ նույն գործառույթն այդ տարածաշրջանի կամ տարածքի նկատմամբ: Կենտրոնական մարմինները պետք է ապահովեն ստացված պահանջով դիմումներին արագ եւ պատշաճ ընթացք տալը կամ դրանք փոխանցելը: Երբ կենտրոնական մարմինը պահանջով դիմումը կատարման համար փոխանցում է իրավասու մարմնին, ապա նա պետք է խրախուսի իրավասու մարմնի կողմից տվյալ պահանջով դիմումին արագ եւ պատշաճ ընթացք տալը: Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությանը միանալու, դրա ընդունման, հաստատման, պաշտոնական հաստատման կամ վավերացման ժամանակ ծանուցում է Կոնվենցիայի քարտուղարության ղեկավարին այդ նպատակով նշանակված կենտրոնական մարմնի մասին: Փոխադարձ իրավական օգնության պահանջով դիմումների եւ դրանց վերաբերող ցանկացած հաղորդման փոխանցումն իրականացվում է Կողմերի կողմից

նշանակված կենտրոնական մարմինների միջեւ: Այդ պահանջը չպետք է հակասի Կողմի իրավունքին՝ պահանջելու, որ նման պահանջով դիմումներն ու հաղորդումներն իրեն հասցեագրվեն դիվանագիտական ուղիներով եւ այնպիսի արտակարգ իրավիճակների պարագայում, երբ Կողմերը հնարավորության դեպքում պայմանավորվածություն են ձեռք բերել համապատասխան միջազգային կազմակերպությունների միջոցով:

7. Պահանջով դիմումներն ուղարկվում են գրավոր կամ, եթե հնարավոր է, ցանկացած միջոցի օգնությամբ, որը հնարավորություն է տալիս հայցվող Կողմի համար ընդունելի լեզվով կազմելու գրավոր նշումներ այնպիսի պայմաններով, որոնք այդ Կողմին հնարավորություն են տալիս ստուգելու արժանահավատությունը: Սույն արձանագրությանը միանալու, դրա ընդունման, հաստատման, պաշտոնական հաստատման կամ վավերացման ժամանակ Կոնվենցիայի քարտուղարության ղեկավարը պետք է ծանուցվի այն լեզվի կամ լեզուների մասին, որոնք ընդունելի են յուրաքանչյուր Կողմի համար: Արտակարգ իրավիճակներում եւ Կողմերի համաձայնության դեպքում պահանջով դիմումները կարող են ուղարկվել բանավոր, սակայն դրանք անհապաղ պետք է հաստատվեն գրավոր:

8. Փոխադարձ իրավական օգնության պահանջով դիմումը պետք է ընդգրկի՝

ա) պահանջով դիմող մարմնի անվանումը.

բ) հարցի էությունը եւ քննության, գործով հետապնդման կամ դատաքննության բնույթը, որոնց առնչվում է պահանջով դիմումը, ինչպես նաեւ այդ քննությունը, գործով հետապնդումը կամ դատաքննությունն իրականացնող մարմնի անվանումը եւ գործառույթները.

գ) համապատասխան փաստերի համառոտ շարադրանքը՝ բացառությամբ դատական փաստաթղթերի հանձնմանը վերաբերող պահանջով դիմումների.

- դ) հայցվող օգնության նկարագրությունը եւ մանրակրկիտ տեղեկատվություն ցանկացած առանձնակի ընթացակարգի մասին, որ հայցող Կողմը կցանկանար, որ պահպանվեր.
 - ե) ըստ հնարավորության՝ ցանկացած շահագրգիռ անձի ինքնության, գտնվելու վայրի եւ քաղաքացիության վերաբերյալ տվյալները,
 - զ) այն նպատակը, որի համար հայցվում են ապացույցները, տեղեկատվությունը կամ գործողությունը, եւ
 - է) ներպետական օրենսդրության դրույթները, որոնք վերաբերում են հանցագործությանը եւ դրա համար նախատեսված պատժին:
9. Հայցվող Կողմը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկատվություն, երբ այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է համարվում, իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, պահանջով դիմումին ընթացք տալու համար, կամ եթե այդ տեղեկատվությունը կարող է դյուրացնել այդպիսի պահանջով դիմումին ընթացք տալը:
10. Պահանջով դիմումին պետք է ընթացք տալ հայցվող Կողմի ներպետական օրենսդրության համաձայն եւ այն չափով, որը չի հակասում հայցվող Կողմի ներպետական օրենսդրությանը եւ հնարավորության դեպքում՝ պահանջով դիմումի մեջ նշված ընթացակարգերին համապատասխան:
11. Հայցող Կողմն առանց հայցվող Կողմի նախնական համաձայնության չպետք է փոխանցի կամ օգտագործի հայցվող Կողմի տրամադրած տեղեկատվությունը կամ ապացույցները՝ քննություն, գործով հետապնդում կամ դատաքննություն իրականացնելու համար՝ պահանջով դիմումի մեջ նշված նպատակից տարբեր նպատակներով: Ոչինչ սույն կետում չպետք է խանգարի հայցող Կողմին իր մոտ անցկացվող վարույթի ընթացքում բացահայտել այն տեղեկատվությունը կամ ապացույցները, որոնք արդարացնում են մեղադրյալին: Այդ դեպքում նախքան դրանք բացահայտելը հայցող Կողմը պետք է ծանուցի հայցվող Կողմին եւ, եթե

նման պահանջով դիմում է ստացվել, պետք է հայցվող Կողմի հետ խորհրդատվություն անցկացնի: Եթե բացառիկ դեպքերում հնարավոր չէ նախապես ծանուցել, ապա հայցող Կողմն այդպիսի բացահայտման մասին պետք է անհապաղ հայտնի հայցվող Կողմին:

12. Հայցող Կողմը կարող է պահանջել, որ հայցվող Կողմը պահպանի պահանջով դիմումի առկայության փաստի եւ բովանդակության գաղտնիությունը՝ բացառությամբ այն չափի, որն անհրաժեշտ է պահանջով դիմումին ընթացք տալու համար: Եթե հայցվող Կողմը չի կարող կատարել գաղտնիության վերաբերյալ պահանջը, ապա նա այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի հայցող Կողմին:
13. Հնարավորության դեպքում եւ ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքների պահպանմամբ, երբ որեւէ անձ գտնվում է որեւէ Կողմի տարածքում եւ պետք է լսվի որպես վկա կամ փորձագետ մեկ այլ Կողմի դատական մարմինների կողմից, ապա առաջին Կողմը մյուս Կողմի պահանջով կարող է թույլատրել լսումն անցկացնել տեսակապի օգնությամբ, եթե համապատասխան անձի համար հնարավոր կամ ցանկալի չէ լինել հայցող Կողմի տարածքում: Կողմերը կարող են պայմանավորվել այն մասին, որ լսումն անցկացվի հայցող Կողմի դատական մարմնի կողմից, եւ դրան մասնակցի հայցվող Կողմի դատական մարմինը:
14. Փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը կարող է մերժվել՝
 - ա) եթե պահանջով դիմումը չի ներկայացվել սույն հոդվածի դրույթների համաձայն.
 - բ) եթե հայցվող Կողմը գտնում է, որ պահանջով դիմումին ընթացք տալը կարող է վնասել իր ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ այլ էական շահերի.
 - գ) եթե հայցվող Կողմի ներպետական օրենսդրությունը նրա մարմիններին արգելում է հայցվող գործողությունն իրականացնել համանման

ցանկացած իրավախախտման առնչությամբ, եթե այդպիսի իրավախախտումը նրա իրավագործության շրջանակներում ենթակա է քննության, գործով հետապնդման կամ դատաքննության.

դ) եթե պահանջով դիմումը ներառում է հանցագործություն, որի համար հայցվող Կողմում առավելագույն պատիժը երկու տարուց պակաս ժամկետով ազատազրկումն է կամ ազատությունից զրկելու այլ ձեւեր, կամ եթե հայցվող Կողմի կարծիքով օգնության տրամադրումը կառաջացնի բեռ իր ռեսուրսների համար, որոնք անհամաչափ են հանցագործության ծանրությանը, կամ

ե) եթե այն հակասում է պահանջով դիմումը բավարարելու համար փոխադարձ իրավական օգնությանն առնչվող՝ հայցվող Կողմի իրավական համակարգին:

15. Փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու ցանկացած մերժման համար պետք է ներկայացվեն պատճառներ:

16. Կողմերը չպետք է մերժեն սույն հոդվածի համաձայն փոխադարձ իրավական օգնության տրամադրումը՝ հիմնվելով բանկային գաղտնիքի վրա:

17. Կողմերը չեն կարող մերժել փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը միայն այն հիմքով, որ իրավախախտումն ընդգրկում է նաեւ ֆինանսական հարցեր:

18. Կողմերը կարող են մերժել սույն հոդվածի համաձայն փոխադարձ իրավական օգնություն տրամադրելը արարքի համար երկակի պատասխանատվության բացակայության հիմքով:

Այնուամենայնիվ, հայցվող Կողմը կարող է, երբ նպատակահարմար է համարում, տրամադրել օգնություն իր հայեցողությամբ որոշված սահմաններում՝ անկախ նրանից, թե արդյոք այդ վարքագիծը հայցվող Կողմի ներպետական օրենսդրության համաձայն իրավախախտում է, թե ոչ:

19. Հայցվող Կողմը, որքան հնարավոր է շուտ, պետք է ընթացք տա փոխադարձ իրավական օգնության պահանջով դիմումին եւ հնարավորինս ամբողջությամբ հաշվի առնի հայցող Կողմի առաջարկած ցանկացած վերջնաժամկետ, որի մասով նախընտրելիորեն պահանջով դիմումի մեջ ներկայացվել են համապատասխան պատճառներ: Հայցվող Կողմը պետք է պատասխանի պահանջով դիմումին ընթացք տալու գործընթացի վերաբերյալ հայցող կողմի խելամիտ հարցումներին: Հայցող Կողմն անհապաղ տեղեկացնում է հայցվող Կողմին այն մասին, որ հայցվող օգնությունն այլևս անհրաժեշտ չէ:
20. Փոխադարձ իրավական օգնություն ցույց տալը հայցվող Կողմի կողմից կարող է հետաձգվել այն հիմքով, որ դա խոչընդոտում է քննության, գործով հետապնդման կամ դատաքննության իրականացումը:
21. Նախքան 14-րդ կետի համաձայն պահանջով դիմումը մերժելը կամ 20-րդ կետի համաձայն դրա կատարումը հետաձգելը՝ հայցվող Կողմը պետք է խորհրդակցություններ անցկացնի հայցող Կողմի հետ, որոշելու՝ արդյոք կարող է օգնությունը տրամադրվել այնպիսի ժամկետներում եւ այնպիսի պայմաններով, որոնք նա անհրաժեշտ է համարում: Եթե հայցող Կողմն օգնությունն ընդունում է այդպիսի պայմաններով, ապա նա պետք է պահպանի տվյալ պայմանները:
22. Պահանջով դիմումին ընթացք տալու հետ կապված սովորական ծախսերը պետք է հոգա հայցվող Կողմը, եթե շահագրգիռ Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվել: Եթե պահանջով դիմումին ընթացք տալու համար պահանջվում են կամ կպահանջվեն էական կամ արտակարգ ծախսեր, ապա Կողմերը պետք է խորհրդակցեն՝ որոշելու համար այն ժամկետները եւ պայմանները, որոնցով պետք է ընթացք տրվի պահանջով դիմումին, ինչպես նաեւ ծախսերը հոգալու կարգը:
23. Պահանջով դիմում ստանալու դեպքում հայցվող Կողմը՝

- ա) հայցող Կողմին է տրամադրում իր տրամադրության տակ գտնվող պետական նյութերի, փաստաթղթերի կամ տեղեկատվության պատճենները, որոնք, իր ներպետական օրենսդրության համաձայն, հանրամատչելի են, եւ
 - բ) իր հայեցողությամբ կարող է ամբողջությամբ, մասնակիորեն կամ այն պայմանների պահպանմամբ, որոնք ինքն անհրաժեշտ է համարում, հայցող Կողմին տրամադրել իր տրամադրության տակ գտնվող պետական ցանկացած նյութի, փաստաթղթի կամ տեղեկատվության պատճենը, որը, իր ներպետական օրենսդրության համաձայն, հանրամատչելի չէ:
24. Կողմերը, ըստ անհրաժեշտության, քննարկում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կնքելու կամ պայմանավորվածություններ ձեռք բերելու հնարավորությունը, որոնք կարող են ծառայել սույն հոդվածի նպատակներին, ապահովել նրա գործնական կիրառումը կամ ամրապնդել նրա դրույթները:

ՀՈԴՎԱԾ 30

Հանձնումը

1. Սույն հոդվածը կիրառվում է սույն արձանագրության 14-րդ հոդվածի համաձայն սահմանված հանցագործությունների նկատմամբ, երբ՝
 - ա) անձը, որին վերաբերում է հանձնման պահանջով դիմումը, գտնվում է հայցվող Կողմի տարածքում,
 - բ) հանցագործությունը, որի կապակցությամբ հայցվում է հանձնումը, պատժելի է համարվում ինչպես հայցող Կողմի, այնպես էլ հայցվող Կողմի ներպետական օրենսդրությամբ, եւ

- գ) հանցագործությունը պատժվում է առավելագույն ժամկետով ազատազրկմամբ կամ ազատությունից զրկելու այլ ձևերով՝ առնվազն չորս տարի ժամկետով, կամ ավելի խիստ պատժով կամ շահագրգիռ Կողմերի կողմից համաձայնեցված ավելի քիչ ժամկետով՝ երկկողմ եւ բազմակողմ պայմանագրերի կամ այլ միջազգային համաձայնագրերի համաձայն:
2. Հանցագործություններից յուրաքանչյուրը, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, համարվում է Կողմերի միջեւ գոյություն ունեցող՝ հանձնման մասին ցանկացած պայմանագրի մեջ ընդգրկված՝ հանձնման հանգեցնող հանցագործություն: Կողմերը պարտավորվում են այդպիսի հանցագործությունները, որպես հանձնման հանգեցնող հանցագործություններ, ներառել իրենց միջեւ կնքվող հանձնման մասին յուրաքանչյուր պայմանագրում:
3. Եթե Կողմը, որը հանձնումը պայմանավորում է պայմանագրի առկայությամբ, հանձնման պահանջով դիմում է ստանում այլ Կողմից, որի հետ հանձնման մասին պայմանագիր չունի, ապա կարող է սույն արձանագրությունը դիտարկել որպես իրավական հիմք ցանկացած այնպիսի հանցագործության կապակցությամբ հանձնման համար, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը:
4. Կողմերը, որոնք հանձնումը չեն պայմանավորում պայմանագրի առկայությամբ, միմյանց միջեւ հարաբերություններում այն հանցագործությունները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, ճանաչում են որպես հանձնման հանգեցնող հանցագործություններ:
5. Հանձնումը ենթակա է հայցվող Կողմի ներպետական օրենսդրությամբ կամ հանձնման մասին կիրառելի պայմանագրերով նախատեսված պայմաններին՝ ներառելով, *inter alia*, հանձնման առնչությամբ նվազագույն պատժի վերաբերյալ պահանջների հետ կապված պայմանները եւ այն հիմքերը, որոնցով հայցվող Կողմը կարող է մերժել հանձնումը:

6. Կողմերը, իրենց ներպետական օրենսդրության համաձայն, ջանքեր են գործադրում արագացնելու ցանկացած հանցագործության առնչությամբ հանձնման ընթացակարգերը եւ պարզեցնելու դրա հետ կապված ապացույցներ ներկայացնելու վերաբերյալ պահանջները, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը:
7. Եթե Կողմը, որի տարածքում գտնվում է ենթադրյալ հանցանք կատարած անձը, չի հանձնում այդ անձին այն հանցագործության կապակցությամբ, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը միայն այն հիմքով, որ նա հանդիսանում է իր քաղաքացիներից մեկը, ապա հանձնումը հայցող Կողմի պահանջով պարտավորվում է առանց չարդարացված ձգձգումների գործը փոխանցել իր իրավասու մարմիններին՝ հետապնդման նպատակով: Այդ մարմիններն իրենց որոշումը կայացնում եւ վարույթն իրականացնում են նույն կարգով, ինչ նմանատիպ բնույթի ցանկացած այլ հանցագործության դեպքում՝ այդ Կողմի ներպետական օրենսդրության համաձայն: Շահագրգիռ Կողմերը համագործակցում են միմյանց հետ, մասնավորապես՝ դատավարական եւ ապացուցման հարցերով, այդպիսի հետապնդման արդյունավետությունն ապահովելու համար:
8. Ցանկացած դեպքում, երբ Կողմին, իր ներպետական օրենսդրության համաձայն, թույլատրվում է իր քաղաքացիներից որեւէ մեկին հանձնել կամ որեւէ այլ եղանակով փոխանցել միայն այն պայմանով, որ այդ անձը պետք է այդ Կողմին վերադարձվի պատիժը կրելու համար, որը նշանակվել է այն դատաքննության կամ վարույթի արդյունքում, որի կապակցությամբ հայցվել է այդ անձի հանձնումը կամ փոխանցումը, եւ այդ Կողմը եւ այդ անձի հանձնումը հայցած Կողմը համաձայնել են այդ տարբերակին եւ այլ պայմանների, որոնք նրանք կարող են անհրաժեշտ համարել, ապա այդպիսի պայմանական հանձնումը կամ փոխանցումը բավարար է համարվում 7-րդ կետով սահմանված պարտավորությունը կատարելու համար:

9. Եթե հանձնումը, որը հայցվում է պատիժն ի կատար ածելու նպատակով, մերժվում է, որովհետեւ հայցվող անձը հանդիսանում է հայցվող Կողմի քաղաքացի, ապա հայցվող Կողմը, եթե նրա ներպետական օրենսդրությունը դա թույլ է տալիս, եւ եթե դա համապատասխանում է այդ օրենսդրությանը, հիմնվելով հայցող Կողմի դիմումի վրա, քննարկում է հայցող Կողմի ներպետական օրենսդրության համաձայն նշանակված պատիժը կամ պատժի մնացած մասն ի կատար ածելու հարցը:
10. Ցանկացած անձի հանդեպ, որի գործով վարույթ է իրականացվում որեւէ հանցագործության կապակցությամբ, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, երաշխավորվում է վարույթի բոլոր փուլերում արդարացի վերաբերմունք, ներառյալ՝ այն Կողմի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքների եւ երաշխիքների իրականացումը, որի տարածքում գտնվում է այդ անձը:
11. Սույն արձանագրության մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես հանձնման պարտականության սահմանում, եթե հայցվող Կողմն էական հիմքեր ունի հավատալու, որ հանձնման պահանջով դիմումը նպատակ ունի որեւէ անձի հետապնդելու կամ նրան պատժելու սեռի, ռասայի, կրոնի, քաղաքացիության, էթնիկ ծագման կամ քաղաքական հայացքների պատճառով, կամ որ այդ պահանջով դիմումի բավարարումը վնասաբեր կլինի այդ անձի դրության համար այդ պատճառներից որեւէ մեկով:
12. Կողմերը չեն կարող մերժել հանձնման պահանջով դիմումը միայն այն հիմքով, որ իրավախախտումն ընդգրկում է նաեւ ֆինանսական հարցեր:
13. Նախքան հանձնումը մերժելը հայցվող Կողմը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցում է հայցող Կողմի հետ՝ նրան իր կարծիքը ներկայացնելու եւ իր պնդումներին առնչվող տեղեկատվությունը տրամադրելու լայն հնարավորություն ընձեռելու համար:

14. Կողմերը պետք է ձգտեն կնքել երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ՝ հանձնում իրականացնելու կամ դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Եթե Կողմերը կապված են առկա պայմանագրով կամ միջկառավարական պայմանավորվածությամբ, ապա պետք է կիրառվեն այդ պայմանագրի կամ միջկառավարական պայմանավորվածության համապատասխան դրույթները, եթե միայն Կողմերը չեն համաձայնում դրանց փոխարեն կիրառել 1-13-րդ կետերը:

ՀՈԴՎԱԾ 31

Հանձնումն ապահովող միջոցները

1. Իր ներպետական օրենսդրության դրույթների եւ հանձնման մասին իր պայմանագրերի համաձայն՝ հայցվող Կողմը, համոզվելով նրանում, որ հանգամանքները դա են պահանջում եւ կրում են անհետաձգելի բնույթ, եւ հայցող Կողմի պահանջով կարող է արգելանքի տակ վերցնել իր տարածքում գտնվող այն անձին, որի հանձնումը հայցվում է, կամ ձեռնարկել այլ համապատասխան միջոցներ՝ հանձնման ընթացակարգի ժամանակ նրա ներկայությունն ապահովելու համար:
2. 1-ին կետի համաձայն ձեռնարկված միջոցների մասին, ազգային օրենսդրությանը համապատասխան, ըստ անհրաժեշտության եւ առանց հետաձգման ծանուցվում է հայցող Կողմին:
3. Ցանկացած անձ, որի առնչությամբ ձեռնարկվում են 1-ին կետի համաձայն նշված միջոցները, իրավունք ունի՝
 - ա) անհապաղ կապ հաստատելու այն պետության մոտակա համապատասխան ներկայացուցչի հետ, որի քաղաքացին է այդ անձը, կամ եթե անձը քաղաքացիություն չունեցող անձ է, ապա այն պետության մոտակա համապատասխան ներկայացուցչի հետ, որի տարածքում տվյալ անձը սովորաբար բնակվում է, եւ
 - բ) որ իրեն այցելի այդ պետության ներկայացուցիչը:

ՄԱՍ VI. ԶԵԿՈՒՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

ՀՈԴՎԱԾ 32

Ձեկույց ներկայացնելը եւ տեղեկատվություն փոխանակելը

1. Յուրաքանչյուր Կողմ Կոնվենցիայի քարտուղարության միջոցով Կողմերի ժողովին է ներկայացնում պարբերական զեկույցներ՝ իր կողմից սույն արձանագրության կատարման մասին:
2. Այդ զեկույցների ձեւաչափը եւ բովանդակությունը որոշում է Կողմերի ժողովը: Այդ զեկույցները կազմում են Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի շուրջ պարբերաբար զեկույցելու փաստաթղթի մաս:
3. 1-ին կետում նշված պարբերական զեկույցների բովանդակությունը որոշվում է՝ հաշվի առնելով, *inter alia*, հետեւյալը.
 - ա) սույն արձանագրության իրականացման նպատակներով ձեռնարկված օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցների մասին տեղեկատվությունը,
 - բ) համապատասխան դեպքերում՝ սույն արձանագրության իրականացման ընթացքում առաջացած ցանկացած արգելքի կամ խոչընդոտի վերաբերող եւ այդ խոչընդոտի հաղթահարման համար ձեռնարկված միջոցների մասին տեղեկատվությունը,
 - գ) համապատասխան դեպքերում՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացմանն առնչվող գործունեության համար տրամադրված, ստացված կամ հայցված ֆինանսական եւ տեխնիկական օգնության մասին տեղեկատվությունը, եւ
 - դ) 20-րդ հոդվածում նշված տեղեկատվությունը:

Այն դեպքերում, երբ համապատասխան տվյալներն արդեն հավաքագրվում են որպես Կողմերի համաժողովի զեկուցման մեխանիզմի մաս, Կողմերի ժողովն այդ աշխատանքը կրկին չի իրականացնում:

4. Կողմերի ժողովը, 33-րդ եւ 36-րդ հոդվածներին համապատասխան, քննարկում է զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին իրենց պահանջով օգնություն տրամադրելու պայմանավորվածությունները սույն հոդվածով նախատեսված իրենց պարտավորությունների կատարման գործում:
5. Այդ հոդվածների համաձայն՝ տեղեկատվության հաղորդման վրա տարածվում է գաղտնիության եւ անձնական կյանքի վերաբերյալ ազգային օրենսդրությունը: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պաշտպանում են ցանկացած գաղտնի տեղեկատվություն, որն իրենք հաղորդում կամ փոխանակում են:

ՄԱՍ VII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 33

Կողմերի ժողովը

1. Սույնով հիմնվում է Կողմերի ժողովը: Կողմերի ժողովի առաջին նստաշրջանը հրավիրվում է Կոնվենցիայի քարտուղարության կողմից սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո՝ Կողմերի համաժողովի հաջորդ հերթական նստաշրջանից անմիջապես առաջ կամ անմիջապես հետո:
2. Դրանից հետո Կողմերի ժողովի հերթական նստաշրջանները հրավիրվում են Կոնվենցիայի քարտուղարության կողմից Կողմերի համաժողովի հերթական նստաշրջաններից անմիջապես առաջ կամ անմիջապես հետո:
3. Կողմերի ժողովի արտահերթ նստաշրջաններն անցկացվում են այլ ժամկետներում, որոնք ժողովը կարող է անհրաժեշտ համարել, կամ որեւէ Կողմի գրավոր պահանջի հիման վրա՝ պայմանով, որ այդ պահանջի մասին Կոնվենցիայի քարտուղարության կողմից Կողմերին հաղորդելուց հետո վեց ամսվա ընթացքում այն կստանա Կողմերի առնվազն մեկ երրորդի աջակցությունը:
4. Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի Կողմերի համաժողովի Ընթացակարգի կանոնները եւ Ֆինանսական կանոնները, կիրառվում են, *mutatis mutandis*, Կողմերի ժողովի նկատմամբ, եթե Կողմերի ժողովն այլ բան չի որոշում:
5. Կողմերի ժողովը կանոնավոր կերպով ստուգում է սույն արձանագրության իրականացումը եւ ընդունում է որոշումներ, որոնք անհրաժեշտ են դրա արդյունավետ իրականացմանն աջակցելու համար:

6. Կողմերի ժողովը սահմանում է Արձանագրության Կողմերի կողմից սույն արձանագրության գործարկման նպատակով կամավոր հաշվեգրված մուծումների մասշտաբը եւ մեխանիզմը, ինչպես նաեւ դրա իրականացման համար հնարավոր այլ միջոցներ:
7. Յուրաքանչյուր հերթական նստաշրջանում Կողմերի ժողովը միաձայնությամբ ընդունում է ֆինանսական ժամանակահատվածի բյուջեն եւ աշխատանքային պլանը մինչեւ հաջորդ հերթական նստաշրջանը, որոնք պետք է Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի բյուջեից եւ աշխատանքային պլանից տարբեր լինեն:

ՀՈԴՎԱԾ 34

Քարտուղարությունը

1. Կոնվենցիայի քարտուղարությունը հանդիսանում է սույն արձանագրության քարտուղարությունը:
2. Կոնվենցիայի քարտուղարության՝ որպես սույն արձանագրության քարտուղարության դերին վերաբերող գործառույթները հետեւյալն են.
 - ա) կազմակերպել Կողմերի ժողովի եւ ցանկացած օժանդակ մարմնի, ինչպես նաեւ աշխատանքային խմբերի եւ Կողմերի ժողովի կողմից ստեղծված այլ մարմինների նստաշրջանները եւ ապահովել դրանց անհրաժեշտ ծառայություններով,
 - բ) ստանալ, վերլուծել, փոխանցել եւ ըստ անհրաժեշտության՝ հետադարձ կարծիք ներկայացնել շահագրգիռ Կողմերին, ինչպես նաեւ Կողմերի ժողովին սույն արձանագրության համաձայն իր կողմից ստացված զեկույցների վերաբերյալ եւ նպաստել Կողմերի միջեւ տեղեկատվության փոխանակմանը,

- գ) աջակցություն տրամադրել Կողմերին, հատկապես զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին իրենց պահանջով սույն արձանագրության դրույթներին համապատասխան պահանջվող տեղեկատվության հավաքման, փոխանցման եւ փոխանակման հարցում, եւ օգնություն ցուցաբերել սույն արձանագրությամբ նախատեսված պարտավորությունների կատարումը դյուրացնելու համար առկա միջոցների հայտնաբերման հարցում,
- դ) պատրաստել զեկույցներ սույն արձանագրությամբ նախատեսված իր գործունեության վերաբերյալ՝ Կողմերի ժողովի ղեկավարությամբ եւ նրան ներկայացնելու համար,
- ե) Կողմերի ժողովի ղեկավարությամբ ապահովել իրավասու միջազգային եւ տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների եւ այլ մարմինների հետ անհրաժեշտ համակարգումը,
- զ) Կողմերի ժողովի ղեկավարությամբ ձեռք բերել այնպիսի վարչական կամ պայմանագրային պայմանավորվածություններ, որոնք կարող են պահանջվել որպես սույն արձանագրության քարտուղարություն իր գործառույթների արդյունավետ իրականացման համար,
- է) ստանալ եւ ուսումնասիրել միջկառավարական եւ ոչ պետական կազմակերպությունների դիմումները, որոնք ցանկանում են հավատարմագրվել որպես Կողմերի ժողովի դիտորդներ՝ միաժամանակ ապահովելով, որ նրանք կապված չլինեն ծխախոտի արդյունաբերության հետ, եւ ուսումնասիրված դիմումները ներկայացնել Կողմերի ժողովին՝ քննարկման համար, եւ
- ը) իրականացնել սույն արձանագրությամբ սահմանված քարտուղարության այլ գործառույթներ, ինչպես նաեւ այնպիսի այլ գործառույթներ, որոնք կարող են որոշվել Կողմերի ժողովի կողմից:

ՀՈՂՎԱԾ 35

Կողմերի ժողովի եւ միջկառավարական կազմակերպությունների միջեւ հարաբերությունները

Սույն արձանագրության նպատակին հասնելու համար տեխնիկական եւ ֆինանսական համագործակցություն ապահովելու նպատակով Կողմերի ժողովը կարող է համագործակցության պահանջով դիմել իրավասու միջազգային եւ տարածաշրջանային միջկառավարական կազմակերպություններին, ներառյալ՝ ֆինանսական եւ զարգացման հարցերով զբաղվող հաստատություններին:

ՀՈՂՎԱԾ 36

Ֆինանսական ռեսուրսները

1. Կողմերն ընդունում են սույն արձանագրության նպատակին հասնելու հարցում ֆինանսական ռեսուրսների կարելի դերը եւ ընդունում են Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 26-րդ հոդվածի կարելիությունը Կոնվենցիայի նպատակներին հասնելու հարցում:
2. Յուրաքանչյուր Կողմ ֆինանսական աջակցություն է տրամադրում իր ազգային գործունեության կապակցությամբ, որն ուղղված է սույն արձանագրության նպատակին հասնելուն՝ իր ազգային պլաններին, գերակայություններին եւ ծրագրերին համապատասխան:
3. Կողմերը, ըստ անհրաժեշտության, նպաստում են երկկողմ, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային եւ այլ բազմակողմ ուղիների օգտագործմանը՝ տրամադրելու ֆինանսավորում զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի կարողությունների ամրապնդման համար՝ սույն արձանագրության նպատակների իրականացման նպատակով:

4. Չհակասելով 18-րդ հոդվածին՝ Կողմերին խրախուսվում է, ազգային օրենքների եւ քաղաքականության համաձայն եւ ըստ անհրաժեշտության, օգտագործել ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների եւ արտադրական սարքավորումների ապօրինի առետրից առաջացած՝ հանցավոր ճանապարհով ստացված՝ բռնագրավված ցանկացած եկամուտ՝ սույն արձանագրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար:
5. Համապատասխան տարածաշրջանային եւ միջազգային միջկառավարական կազմակերպություններում, ինչպես նաեւ ֆինանսական եւ զարգացման հարցերով զբաղվող հաստատություններում ներկայացված Կողմերը խրախուսում են այդ հաստատությունների կողմից ֆինանսական աջակցություն տրամադրել զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին՝ սույն արձանագրությամբ նախատեսվող նրանց պարտավորությունների կատարման հարցում օգնություն ցուցաբերելու նպատակով՝ առանց սահմանափակելու այդ կազմակերպություններում մասնակցության իրավունքը:
6. Կողմերը համաձայնում են, որ՝
 - ա) սույն արձանագրությամբ նախատեսված իրենց պարտավորությունների կատարման հարցում Կողմերին օգնություն ցուցաբերելու համար պետք է հավաքել եւ ի նպաստ բոլոր Կողմերի, հատկապես զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի, օգտագործել սույն արձանագրության նպատակին վերաբերող գործունեության համար հասանելի բոլոր համապատասխան հնարավոր եւ գոյություն ունեցող ռեսուրսները, եւ
 - բ) Կոնվենցիայի քարտուղարությունն առաջարկություններ է ներկայացնում զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին եւ անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին՝ իրենց

պահանջով, ֆինանսավորման առկա աղբյուրների վերաբերյալ՝ սույն արձանագրությամբ նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը դյուրացնելու նպատակով:

7. Կողմերը կարող են պահանջել, որ ծխախոտի արդյունաբերությունը կրի ցանկացած ծախս, որը կապված է սույն արձանագրության նպատակներին հասնելու Կողմի պարտավորությունների հետ՝ համաձայն Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 5.3 հոդվածի:
8. Կողմերը, իրենց ներպետական օրենսդրության համաձայն, ձգտում են հասնել ինքնաֆինանսավորման՝ Արձանագրության կատարման համար, այդ թվում՝ ծխախոտային արտադրատեսակների համար հարկեր եւ այլ ձեւի վճարներ գանձելու միջոցով:

ՄԱՍ VIII. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 37

Վեճերի կարգավորումը

Սույն արձանագրության մեկնաբանման կամ կիրառության առնչությամբ Կողմերի միջեւ վեճերի կարգավորումն իրականացվում է Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 27-րդ հոդվածով:

ՄԱՍ IX. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՄՇԱԿՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 38

Սույն արձանագրության մեջ փոփոխություններ կատարելը

1. Ցանկացած Կողմ կարող է սույն արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել:
2. Սույն արձանագրության փոփոխությունները քննարկում եւ ընդունում է Կողմերի ժողովը: Սույն արձանագրության ցանկացած առաջարկված փոփոխության տեքստ Կոնվենցիայի քարտուղարության կողմից ուղարկվում է Կողմերին նստաշրջանից առնվազն վեց ամիս առաջ, որի ընթացքում առաջարկվում է այդ արձանագրության ընդունումը: Կոնվենցիայի քարտուղարությունն առաջարկվող փոփոխություններն ուղարկում է նաեւ սույն արձանագրության ստորագրող Կողմերին, ինչպես նաեւ Ավանդապահին՝ ի գիտություն:
3. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը՝ սույն արձանագրության ցանկացած առաջարկվող փոփոխության վերաբերյալ փոխհամաձայնության հասնելու համար: Եթե փոխհամաձայնության հասնելու բոլոր ջանքերը

սպառվել են, իսկ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա որպես ծայրահեղ միջոց՝ փոփոխությունն ընդունվում է այն Կողմերի երեք քառորդի ձայների մեծամասնությամբ, որոնք ներկա են նստաշրջանին եւ մասնակցում են քվեարկությանը: Սույն հոդվածի նպատակներով «նիստին ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող Կողմեր» ասելով՝ ենթադրվում են նիստին ներկա գտնվող եւ «կողմ» կամ «դեմ» քվեարկող Կողմերը: Կոնվենցիայի քարտուղարությունը ցանկացած ընդունված փոփոխության մասին հաղորդում է ավանդապահին, որն էլ ուղարկում է այն բոլոր Կողմերին՝ ընդունման համար:

4. Փոփոխությունների հետ կապված ընդունման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին: 3-րդ կետին համապատասխան ընդունված փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն Կողմերի համար, որոնք դա ընդունել են Կողմերի առնվազն երկու երրորդի կողմից ընդունման մասին փաստաթուղթն Ավանդապահի կողմից ստանալու օրվանից հետո իննսուներորդ օրը:
5. Փոփոխությունն ուժի մեջ է մտնում ցանկացած այլ Կողմի համար նշված փոփոխությունն ընդունելու մասին տվյալ Կողմի փաստաթուղթն Ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից հետո իննսուներորդ օրը:

ՀՈԴՎԱԾ 39

Սույն արձանագրության հավելվածների ընդունումը եւ դրանցում փոփոխություններ կատարելը

1. Յանկացած Կողմ կարող է առաջարկներ ներկայացնել սույն արձանագրության հավելվածի մասով եւ կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն արձանագրության հավելվածներում:
2. Հավելվածները սահմանափակվում են ընթացակարգային, գիտական, տեխնիկական կամ վարչական հարցերին վերաբերվող ցուցակներով, ձեւերով եւ ցանկացած այլ նկարագրական նյութով:

3. Սույն արձանագրության հավելվածները եւ դրանցում կատարվող փոփոխություններն առաջարկվում, ընդունվում եւ ուժի մեջ են մտնում 38-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան:

ՄԱՍ X. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 40

Վերապահումները

Սույն արձանագրության մասով վերապահումներ չեն կարող արվել:

ՀՈԴՎԱԾ 41

Արձանագրությունից դուրս գալը

1. Ցանկացած ժամանակ որեւէ Կողմի համար սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարի անց այդ Կողմը կարող է դուրս գալ Արձանագրությունից՝ ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով:
2. Արձանագրությունից ցանկացած այդպիսի դուրս գալն ուժի մեջ է մտնում Արձանագրությունից դուրս գալու մասին ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից մեկ տարուց հետո կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշված լինել Արձանագրությունից դուրս գալու մասին ծանուցման մեջ:
3. Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայից դուրս եկող ցանկացած Կողմ դուրս եկած է համարվում նաեւ սույն արձանագրությունից, որն ուժի մեջ է մտնում Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայից դուրս գալու օրը:

ՀՈԴՎԱԾ 42

Ճայնի իրավունքը

1. Սույն արձանագրության յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն՝ բացառությամբ 2-րդ կետում նախատեսված դեպքի:
2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասությանը վերաբերող հարցերում օգտագործում են իրենց ձայնի իրավունքը՝ ունենալով ձայների այն քանակը, որը հավասար է սույն արձանագրության Կողմեր հանդիսացող անդամ պետությունների քանակին: Այդ կազմակերպությունը չի օգտագործում ձայնի իր իրավունքը, եթե իր անդամ պետություններից որեւէ մեկն օգտագործում է իր իրավունքը, եւ հակառակը:

ՀՈԴՎԱԾ 43

Ստորագրումը

Սույն արձանագրությունը բաց է ստորագրման համար Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի բոլոր Կողմերի համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Ժնևում գտնվող գլխամասային գրասենյակում 2013 թվականի հունվարի 10-ից 11-ը, իսկ այնուհետեւ՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ Նյու Յորքում գտնվող գլխամասային գրասենյակում մինչեւ 2014 թվականի հունվարի 9-ը:

ՀՈԴՎԱԾ 44**Վավերացումը, ընդունումը, հաստատումը, պաշտոնական
հավանությունը կամ միացումը**

1. Սույն արձանագրությունը ենթակա է պետությունների կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման, ինչպես նաև Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի Կողմ հանդիսացող տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից պաշտոնական հավանություն տալու կամ միանալու: Այն բաց է լինելու միանալու համար Արձանագրության ստորագրման համար փակվելու օրվան հաջորդող օրվանից: Վավերացման, ընդունման, հաստատման, պաշտոնապես հավանություն տալու կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին:
2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ցանկացած կազմակերպություն, որը դառնում է Կողմ, այն դեպքերում, երբ իր անդամ պետություններից ոչ մեկը Կողմ չի հանդիսանում, կրում է Արձանագրությամբ նախատեսվող բոլոր պարտավորությունները: Այն դեպքում, երբ այդ կազմակերպությունների մեկ կամ ավելի անդամ պետությունները Կողմեր են, այդ կազմակերպությունը եւ նրա անդամ պետությունները որոշում են ընդունում սույն արձանագրությամբ նախատեսվող իրենց պարտականությունների կատարման համապատասխան պարտականությունների վերաբերյալ: Այդ դեպքերում կազմակերպությունը եւ անդամ պետությունները չեն կարող զուգահեռաբար իրականացնել իրավունքներ սույն արձանագրության շրջանակներում:
3. Պաշտոնական հավանություն տալու կամ միանալու վերաբերյալ իրենց փաստաթղթերում տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները հայտարարում են սույն արձանագրությամբ կարգավորվող հարցերում իրենց իրավասության սահմանների մասին: Այդ կազմակերպությունները նաև տեղեկացնում են ավանդապահին, որն իր

հերթին տեղեկացնում է Կողմերին իրենց իրավասության սահմանների ցանկացած էական փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 45

Ուժի մեջ մտնելը

1. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման, պաշտոնական հավանություն տալու կամ միանալու վերաբերյալ քառասուներորդ փաստաթուղթն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից հետո իննսուներորդ օրը:
2. Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմի համար, որը վավերացնում, ընդունում, հաստատում է սույն արձանագրությունը կամ պաշտոնապես հավանություն է տալիս կամ միանում է դրան ուժի մեջ մտնելու վերաբերյալ 1-ին կետում նշված պայմանները կատարելուց հետո, սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման, միանալու կամ պաշտոնապես հավանություն տալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո իննսուներորդ օրը:
3. Սույն հոդվածի նպատակների համար ցանկացած փաստաթուղթ, որն ի պահ է հանձնվել տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից, չի համարվում այն փաստաթղթերին հավելյալ փաստաթուղթ, որոնք ի պահ են հանձնվել այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից:

ՀՈԴՎԱԾ 46

Ավանդապահը

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը սույն արձանագրության ավանդապահն է:

ՀՈԴՎԱԾ 47

Նույնական տեքստերը

Սույն արձանագրության բնօրինակը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Հավելված 1.

ԾՎՇԿ/ԿՀ 5(1) որոշումը. Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրություն

Կողմերի համաժողովը,

խորը մտահոգվելով այն փաստով, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը նպաստում է ծխախոտի համաճարակի տարածմանը, որը գլոբալ հիմնահարց է՝ հանրային առողջության համար լուրջ հետեանքների առաջացման ռիսկով, որը պահանջում է ներպետական եւ միջազգային արդյունավետ, անհրաժեշտ եւ համակողմանի պատասխան գործողություններ,

հաշվի առնելով Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածը, որի համաձայն ընդունվում է, *inter alia*, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձևերի վերացումը ծխախոտի վերահսկման անհրաժեշտ բաղադրիչ է,

հիշեցնելով իր ԾՎՇԿ/ԿՀ(12) որոշումը, որով ստեղծվել է Միջկառավարական բանակցային մարմինը՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերաբերյալ արձանագրության մշակման եւ դրա շուրջ բանակցությունների վարման նպատակով, որը պետք է հիմնվեր Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի դրույթների վրա եւ լրացներ դրանք, ինչպես նաեւ հետագա ԾՎՇԿ/ԿՀ3(6) եւ ԾՎՇԿ/ԿՀ4(11) որոշումները, որոնք անդրադառնում էին բանակցությունների ընթացքում ձեռք բերված առաջընթացին,

ընդունելով Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրության մասով Միջկառավարական բանակցային մարմնի կատարած աշխատանքը, որը հանգեցրել է ԾՎՇԿ/ԿՀ/5/6 փաստաթղթում պարունակվող՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրության նախագծին,

համոզված լինելով, որ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիան համապարփակ արձանագրությամբ լրացնելը կլինի ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին եւ դրա ծանր հետեւանքներին հակազդելու հզոր, արդյունավետ միջոց,

1. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է կից ներկայացվող Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրությունը՝ համաձայն Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 33-րդ հոդվածի, եւ
2. ԿՈՉ Է ԱՆՈՒՄ Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի Կողմերին ամենավաղ հնարավորության դեպքում ստորագրելու, վավերացնելու, ընդունելու, հաստատելու Արձանագրությունը, պաշտոնապես հավանություն տալու կամ միանալու դրան՝ Արձանագրության հնարավորինս շուտ ուժի մեջ մտնելն ապահովելու նպատակով:

Հավելված 2.

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրության շուրջ բանակցությունների պատմությունը

Դեռևս 2006 թվականին ԱՀԿ ԾՎՇԿ-ի ուժի մեջ մտնելուց հետո Կողմերի համաժողովի (ԿՀ) առաջին նիստին Կողմերը քննարկել են Կոնվենցիայի հնարավոր արձանագրությունները: Ոլորտներից մեկը, որի մասով նրանք համաձայնել են այն մասին, որ կարող էր արձանագրություն կազմվել, ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրն էր, եւ դրան համապատասխան՝ ԿՀ-ն ստեղծել է փորձագետների խումբ՝ այս ոլորտում հնարավոր արձանագրության ձեւանմուշ պատրաստելու համար: Փորձագետների խումբն իր զեկույցը ներկայացրել է ԿՀ-ին իր երկրորդ նստաշրջանին՝ 2007 թվականին:

Ընդունելով, որ ապօրինի առևտուրը վերացնելու համար անհրաժեշտ էր համակարգված գործողություններ, իր երկրորդ նստաշրջանին ԿՀ-ն ստեղծել է Միջկառավարական բանակցային մարմին (ՄԲՄ), որը բաց էր բոլոր Կողմերի համար, որպեսզի մշակի ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերաբերյալ արձանագրություն եւ բանակցի դրա շուրջ, որը պետք է հիմնվեր ԱՀԿ ԾՎՇԿ-ի 15-րդ հոդվածի վրա եւ լրացներ այն:

ՄԲՄ-ն անցկացրել է հինգ նստաշրջան, բոլորն էլ Շվեյցարիայում՝ Ժնևում: ՄԲՄ-ի առաջին նստաշրջանն անցկացվել է 2008 թվականի փետրվարի 11-15-ը: Փորձագետների խմբի կողմից առաջարկված ապօրինի առևտրի վերաբերյալ արձանագրության ձեւանմուշը որպես հիմք է ծառայել բանակցությունների համար: Եվրոպական միությունը ներկայացնող պրն Յան Ուոլթոն-Ջորջն ընտրվել է որպես ՄԲՄ-ի նախագահ, իսկ դոկտոր Ջ. Ալ-Լավատին (Օման), դոկտոր Ե. Ջարամիլլոն (Մեքսիկա), պրն Փ. Կրիշնան (Հնդկաստան), տկն Լ. Ասիեդուն (Գանա) եւ պրն Ջ. Մարտինը (Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ)՝ որպես

փոխնախագահներ: Առաջին նստաշրջանից հետո պրն Ուոլթոն-Ջորջը մշակել է «նախագահի տեքստը»՝ հաշվի առնելով առաջին նստաշրջանի ընթացքում Կողմերի կողմից արված մեկնաբանությունները:

ՄԲՄ-ի երկրորդ նստաշրջանն անցկացվել է 2008 թվականի հոկտեմբերի 20-25-ը, եւ բանակցությունների համար որպես հիմք է ծառայել նախագահի տեքստը: ԿՀ-ի երրորդ նստաշրջանին (2008 թվականի նոյեմբերի 17-22-ը, Դուրբան, Հարավային Աֆրիկա) ՄԲՄ-ն զեկուցել է ընթացքի մասին: Համաժողովը խնդրել է ՄԲՄ-ին շարունակել իր աշխատանքը եւ իր չորրորդ նստաշրջանին ներկայացնել արձանագրության նախագիծը:

Կրկին ՀՄ-ի խնդրանքով ՄԲՄ-ի երկրորդ եւ երրորդ նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում անցկացվել են տարածաշրջանային խորհրդատվություններ բոլոր վեց տարածաշրջանների համար: Խորհրդատվությունները տեղի են ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան քաղաքում (Արեւելյան միջերկրածովյան տարածաշրջան), Ժնևում (Աֆրիկական եւ եվրոպական տարածաշրջաններ), Մեքսիկայի Մեխիկո քաղաքում (Ամերիկյան տարածաշրջան), Չինաստանի Պեկին քաղաքում (Արեւմտյան խաղաղօվկիանոսյան տարածաշրջան) եւ Բանգլադեշի Դաքքա քաղաքում (Հարավարեւելյան ասիական տարածաշրջան):

Քարտուղարության կողմից պատրաստվել են նաեւ փորձագիտական զեկույցներ մի քանի տեխնիկական հարցերի վերաբերյալ, որոնք պետք է ծառայեին որպես հիմնական փաստաթղթեր ՄԲՄ-ի երրորդ նստաշրջանի քննարկումների համար այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են հետեւելու եւ հետագծելու միջազգային ռեժիմի իրագործելիությունը, համացանցի միջոցով ծխախոտային արտադրատեսակների վաճառքի հնարավոր արգելքի իրավական հետեւանքները, ինչպես նաեւ ծխախոտային արտադրատեսակների անմաքս վաճառքի հնարավոր արգելքը, արձանագրության ընդգրկման շրջանակի վերաբերյալ իրավաբանական խորհրդատվությունը եւ հետեւելու ու հետագծելու միջազգային ռեժիմի մասով ազգային մակարդակով հնարավոր պահանջների գնահատումը:

ՄԲՄ-ի երրորդ նստաշրջանի համար (2009 թվականի հունիսի 28-ից հուլիսի 5-ը) նախագահը պատրաստել է նախագահի վերանայված տեքստը՝ հաշվի առնելով ՄԲՄ-ի երկրորդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած քննարկումները, փորձագետների զեկույցները եւ իրավական խորհրդատվությունը: Նախագահի վերանայված տեքստը որպես հիմք է ծառայել քննարկումների համար ՄԲՄ-ի երրորդ նստաշրջանում: ՄԲՄ-ն վերընտրեց պրն Բուլթոն-Ջորջին որպես նախագահ: Որպես փոխնախագահներ ՄԲՄ-ն ընտրել է դոկտոր Թ. Վինիթին (Պապուա Նոր Գվինեա), պրն Հ. Մոհամեդին (Մալդիվներ), տկն Լ. Ասիեդուին (Գանա), որին ՄԲՄ-ի չորրորդ նստաշրջանում փոխարինել է դոկտոր Մ. Անիբեզը (Նիգերիա), դոկտոր Ե. Ալ Մանսուրիին (Արաբական Միացյալ Էմիրություններ) եւ դոկտոր Զ. Ռեգալիո Պինեդային (Մեքսիկա):

Երրորդ նստաշրջանի արդյունքը եղել է տեքստի շուրջ բանակցություններ վարելը, որը ՄԲՄ-ի համաձայնությամբ պետք է հիմք հանդիսանար հետագա բանակցությունների համար: ՄԲՄ-ի կողմից ստեղծված երկու նախագծող խմբերն աշխատել են երրորդ եւ չորրորդ նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում եւ առաջարկել տեքստ մատակարարման շղթայի վերահսկողությանը եւ քրեական իրավունքի հարցերին, փոխադարձ իրավական օգնությանը եւ հանձնմանը վերաբերող հոդվածների համար՝ չորրորդ նստաշրջանում հետագա բանակցությունները դյուրացնելու նպատակով: Խմբերը ղեկավարել են դոկտոր Մ. Անիբեզը (Նիգերիա) եւ տկն Ի. Դեմունի դե Սիլվան (Շրի Լանկա):

ՄԲՄ-ի չորրորդ նստաշրջանին (2020 թվականի մարտի 14-21-ը) պատվիրակությունները քննարկել են բանակցության տեքստի դրույթները, ինչպես նաեւ նախագծող խմբերի կողմից ներկայացված առաջարկները: Նստաշրջանի փակման ժամանակ ՄԲՄ-ն որոշում է կայացրել առաջարկելու, որ արձանագրության նախագիծը դիտարկվի ԿՀ-ի կողմից դրա չորրորդ նստաշրջանին: Արձանագրության նախագծի տեքստով ցույց է տրվել ՄԲՄ-ի կողմից այս նպատակով ունեցած առաջընթացը. 26 դրույթների շուրջ ձեռք է

բերվել փոխհամաձայնություն, մինչդեռ 23 դրույթները շարունակել են մնալ քննարկման փուլում: Մասնավորապես փոխհամաձայնություն է ձեռք բերվել հետեւելուն եւ հետագծելուն վերաբերող դրույթների եւ լիցենզավորմանը վերաբերող դրույթների մեծ մասի առնչությամբ: Այնուամենայնիվ, մի շարք կարեւոր եւ խնդրահարույց հարցեր մնացել են չլուծված: ՄԲՄ-ն ուղղորդում է խնդրել ԿՀ-ից մի քանի հարցերի, այդ թվում՝ արձանագրության ֆինանսավորման մեթոդի առնչությամբ:

ԿՀ-ն ընդունել է ՄԲՄ-ի գրանցած առաջընթացը եւ երկարաձգել է ՄԲՄ-ի մանդատը մինչեւ 2012 թվականի սկզբին կայանալիք վերջին նիստը՝ խնդրելով ՄԲՄ-ին ներկայացնել արձանագրության նախագծի տեքստն իր հինգերորդ նստաշրջանին՝ քննարկման համար: Այն նաեւ ստեղծել է ոչ պաշտոնական աշխատանքային խումբ՝ առաջարկներ ներկայացնելու եւ հնարավոր տեքստ մշակելու համար՝ ՄԲՄ-ի հինգերորդ նստաշրջանում բանակցությունները դյուրացնելու նպատակով:

30 Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած ոչ պաշտոնական աշխատանքային խումբը (հինգ Կողմեր՝ ԱՀԿ յուրաքանչյուր շրջանից) անցկացրել է երկու հանդիպում (2011 թվականի հուլիսի 4-8-ը եւ սեպտեմբերի 19-23-ը, Ժնեւ), եւ այն նախագահել է դոկտոր Նունթավարն Վիչիտ-Վադականը (Թաիլանդ): Իր մանդատի համաձայն՝ խումբը մշակել է հնարավոր տեքստ Արձանագրության III մասի՝ մատակարարման շղթայի վերահսկմանը վերաբերող այն հոդվածների համար, որոնք դեռ համաձայնեցված չեն եղել, եւ առաջարկներ է ներկայացրել իր մանդատի շրջանակներում այլ հարցերի, ներառյալ՝ արձանագրության ֆինանսավորման մեթոդի եւ արձանագրության նախագծում փոխադարձ իրավական օգնության եւ հանձնման վերաբերյալ դրույթներ ընդգրկելու մասին:

ՄԲՄ-ի հինգերորդ նստաշրջանն անցկացվել է 2012 թվականի մարտի 29-ից ապրիլի 4-ը: ՄԲՄ-ն հաստատել է պրն Ուոլթոն-Ջորջին որպես նախագահ: Պրն Ա. Տ. Ֆայրեքան (Կուկի կղզիներ) փոխարինել է դոկտոր Տ. Վինիթին (Պապուա Նոր Գվինեա), իսկ դոկտոր Մ. Քաբիրը (Նիգերիա) փոխարինել է դոկտոր Մ. Անիբեգին (Նիգերիա) փոխնախագահի պաշտոնում:

Բանակցություններից չորս տարի եւ հինգ նստաշրջան հետո՝ 2012 թվականի ապրիլի 4-ին, ՄԲՄ-ի հինգերորդ նստաշրջանի պատվիրակությունները համաձայնեցրել են փոխհամաձայնության տեքստը, որը պետք է ներկայացվեր ԿՀ-ի քննարկմանը՝ դրա հինգերորդ նստաշրջանում: Արձանագրության նախագծի տեքստում հաշվի են առնվել նաեւ Կողմերի կողմից ներկայացված մեկնաբանությունները՝ անգլերեն տեքստի արաբերեն, չինարեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն թարգմանությունների վերաբերյալ՝ ՄԲՄ-ի որոշմանը համապատասխան:

Արձանագրությունն ընդունվել է 2012 թվականի նոյեմբերի 12-ին ԿՀ-ի հինգերորդ նստաշրջանում փոխհամաձայնության հիման վրա (Կորեայի Հանրապետություն, Սեուլ, 2012 թվականի նոյեմբերի 12-17-ը): Այսպիսով, այն դարձել է ԱՀԿ ԾՎՇԿ-ի առաջին արձանագրությունը եւ նոր միջազգային միանգամայն ինքնուրույն պայմանագիր:

Արձանագրությունը բաց է հայտարարվել ստորագրման համար գրասենյակում: Այդ միջոցառմանը մասնակցել են ավելի քան 50 Կողմեր, որի ընթացքում ԱՀԿ բոլոր վեց տարածաշրջանները ներկայացնող 12 Կողմեր ստորագրել են Արձանագրությունը. եւս մեկ Կողմ այն ստորագրել է հաջորդ օրը: 13 Կողմերն են Չինաստանը, Ֆրանսիան, Գաբոնը, Լիբիան, Մյանմարը, Նիկարագուան, Պանաման, Կորեայի Հանրապետությունը, Հարավային Աֆրիկան, Սիրիայի Արաբական Հանրապետությունը, Թունիսը, Թուրքիան եւ Ուրուգվայը: Արձանագրությունը բաց է մնացել ստորագրման համար Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր գրասենյակում մինչեւ 2014 թվականի հունվարի 9-ը:

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրությունն ուղենիշ է ծխախոտի դեմ համաշխարհային գործողությունների ամրապնդման գործում եւ նոր իրավական գործիք է հանրային առողջության ոլորտում: Այն համապարփակ գործիքով լրացնում է ԱՀԿ ԾՎՇԿ-ն՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրին հակազդելու եւ վերջնականապես վերացնելու եւ առողջապահության հարցում միջազգային համագործակցության իրավական սահմաններն ամրապնդելու նպատակով:

Հավելված 3.

Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդված

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուր

1. Կողմերն ընդունում են, որ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձևերի վերացումը, այդ թվում՝ մաքսանենգության, ապօրինի արտադրության եւ կեղծման վերացումը, ինչպես նաեւ բացի ենթատարածաշրջանային, տարածաշրջանային եւ գլոբալ համաձայնագրերից՝ համապատասխան ազգային օրենսդրության մշակումն ու իրականացումը հանդիսանում են ծխախոտի վերահսկման անհրաժեշտ բաղադրիչներ:
2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում եւ իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ՝ ապահովելու, որ ծխախոտային արտադրատեսակների բոլոր փոքր փաթեթները, փաթեթները եւ այդպիսի արտադրատեսակների ցանկացած արտաքին փաթեթավորում լինեն մակնշված՝ ծխախոտային արտադրատեսակների ծագումը որոշելու գործում Կողմերին օգնելու համար, եւ ազգային օրենսդրությանն ու համապատասխան երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերին համապատասխան՝ շեղման կետը որոշելու, ծխախոտային արտադրատեսակների տեղաշարժի մոնիթորինգի, փաստաթղթավորման եւ վերահսկման, ինչպես նաեւ իրավական կարգավիճակը որոշելու գործում Կողմերին օգնելու համար: Բացի այդ, յուրաքանչյուր Կողմ՝
 - ա) պահանջում է, որ մանրածախ եւ մեծածախ առևտրի համար ծխախոտային արտադրատեսակների բոլոր փոքր փաթեթները եւ փաթեթները, որոնք վաճառվում են իր ներպետական շուկայում, պարունակեն հետեւյալ հայտարարությունը. «Վաճառքը թույլատրվում է միայն (նշել երկրի, վերազգային, տարածաշրջանային կամ դաշնային

տարածքային միավորի անվանումը)», կամ պարունակեն ցանկացած այլ արդյունավետ մակնշում, որով սահմանված կլինի վերջնակետը, կամ որը կօգնի մարմիններին պարզելու՝ արդյո՞ք տվյալ արտադրատեսակը ներպետական շուկայում վաճառքի համար օրինական ճանապարհով է հայտնվել, եւ

բ) համապատասխան դեպքերում քննարկում է գործնականում հետեւելու եւ հետագծելու ռեժիմի ստեղծման հարցը, որը հետագայում կպաշտպանի բաշխման համակարգը եւ կօգնի ապօրինի առևտրի դեպքերի քննության հարցում:

3. Յուրաքանչյուր Կողմ պահանջում է, որ սույն հոդվածի 2-րդ կետում նշված փաթեթավորման տեղեկատվությունը կամ մակնշումը ներկայացված լինի ընթեռնելի ձևով եւ (կամ) հիմնական լեզվով կամ լեզուներով:

4. Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման նպատակներով յուրաքանչյուր Կողմ՝

ա) իրականացնում է ծխախոտային արտադրատեսակների անդրսահմանային առևտրի մոնիթորինգ եւ տվյալների հավաքում՝ ներառելով ապօրինի առևտուրը, ինչպես նաեւ համապատասխան դեպքերում տեղեկատվություն է փոխանակում մաքսային, հարկային եւ այլ մարմինների միջեւ ազգային օրենսդրության եւ կիրառելի երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերին համաձայն,

բ) ընդունում կամ ամրապնդում է օրենսդրությունը համապատասխան տույժերով եւ իրավական պաշտպանության միջոցներով, որոնք ուղղված են ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի դեմ, այդ թվում՝ կեղծ եւ մաքսանենգ ծխախոտների ապօրինի առևտրի դեմ,

գ) անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում՝ ապահովելու բոլոր բռնագրավված արտադրական սարքավորումների, կեղծ եւ մաքսանենգ ծխախոտի եւ այլ ծխախոտային արտադրատեսակների ոչնչացումը՝ օգտագործելով

իրագործելի լինելու դեպքում էկոլոգիապես մաքուր մեթոդները, կամ դրանց վերացումը ներպետական օրենսդրությանը համապատասխան,

դ) իր իրավազրության սահմաններում միջոցներ է սահմանում եւ իրականացնում պահեստավորվող կամ հարկերից կամ տուրքերից ազատված ռեժիմով փոխադրվող ծխախոտային արտադրատեսակների պահպանման եւ բաշխման մոնիթորինգի, փաստաթղթավորման եւ վերահսկման նպատակներով, եւ

ե) անհրաժեշտության դեպքում սահմանում է միջոցներ՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրից հանցավոր ճանապարհով ստացվող եկամուտների բռնագրավման համար:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի «ա» եւ «դ» ենթակետերի հիման վրա հավաքված տեղեկատվությունը Կողմերը համապատասխան դեպքերում իրենց պարբերական զեկույցների շրջանակներում ամփոփ ձեւով ներկայացնում են Կողմերի համաժողովին՝ 21-րդ հոդվածին համապատասխան:

6. Կողմերը համապատասխան դեպքերում եւ ազգային օրենսդրության համաձայն աջակցում են համագործակցությանը ազգային հաստատությունների, ինչպես նաեւ համապատասխան տարածաշրջանային եւ միջազգային միջկառավարական կազմակերպությունների միջեւ այնքանով, որքանով դա վերաբերում է գործով քննությանը, հետապնդմանը եւ վարույթին՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման նպատակներով: Հատուկ ընդգծվում է տարածաշրջանային եւ ենթատարածաշրջանային մակարդակներով համագործակցությունը՝ ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի դեմ պայքարի նպատակներով:

7. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է սահմանել եւ իրականացնել լրացուցիչ միջոցներ՝ համապատասխան դեպքերում ներառելով լիցենզավորումը, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը կամ բաշխումը հսկելու կամ կարգավորելու համար՝ ապօրինի առևտրի կանխարգելման նպատակներով:


Հավելված 4.

Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի 33-րդ հոդված

Արձանագրություններ

1. Ցանկացած Կողմ կարող է առաջարկել արձանագրություններ: Այդպիսի առաջարկները քննարկվում են Կողմերի համաժողովի կողմից:
2. Կողմերի համաժողովը կարող է ընդունել Կոնվենցիային կից արձանագրություններ: Այդ արձանագրությունների ընդունման ընթացքում գործադրվում են բոլոր ջանքերը փոխհամաձայնության հասնելու համար: Եթե փոխհամաձայնության հասնելու բոլոր ջանքերը սպառվել են, իսկ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա որպես ծայրահեղ միջոց՝ արձանագրությունն ընդունվում է այն Կողմերի երեք քառորդի ձայների մեծամասնությամբ, որոնք ներկա են նիստին եւ մասնակցում են քվեարկությանը: Սույն հոդվածի նպատակների համար «նիստին ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող Կողմեր» ասելով՝ ենթադրվում են նիստին ներկա գտնվող եւ «կողմ» կամ «դեմ» քվեարկող Կողմերը:
3. Ցանկացած առաջարկված արձանագրության տեքստ քարտուղարության կողմից ուղարկվում է Կողմերին նստաշրջանից առնվազն վեց ամիս առաջ, որի ընթացքում առաջարկվում է այդ արձանագրության ընդունումը:
4. Արձանագրության կողմեր կարող են լինել միայն սույն Կոնվենցիայի Կողմերը:
5. Սույն Կոնվենցիայի ցանկացած արձանագրություն պարտադիր է միայն համապատասխան արձանագրության կողմերի համար: Այն հարցերով որոշումները, որոնք վերաբերում են բացառապես քննարկվող արձանագրությանը, ընդունվում են միայն տվյալ արձանագրության կողմերի կողմից:
6. Ցանկացած արձանագրության ուժի մեջ մտնելու պայմանները սահմանվում են այդ փաստաթղթով:

Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին արձանագրությունը Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիայի (ԱՀԿ ԾՎՇԿ) առաջին արձանագրությունն է: Արձանագրությունը մշակվել է ի պատասխան ծխախոտային արտադրատեսակների միջազգային աճող ապօրինի առևտրի, որը լուրջ վտանգ է ներկայացնում հանրային առողջության համար՝ մեծացնելով ծխախոտային արտադրատեսակների հասանելիությունը եւ մատչելիությունը՝ այդպիսով խթանելով ծխախոտային համաճարակը եւ խոչընդոտելով ծխախոտի վերահսկման քաղաքականությունը: Ապօրինի առևտուրը նաեւ պետական եկամուտների զգալի կորուստներ է առաջացնում եւ միեւնույն ժամանակ նպաստում անդրազգային հանցավոր գործունեության ֆինանսավորմանը: Արձանագրության նպատակը ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի բոլոր ձեւերի վերացումն է՝ համաձայն ԱՀԿ ԾՎՇԿ-ի 15-րդ հոդվածի պայմանների՝ պահանջելով Կողմերից ձեռնարկել միջոցներ ծխախոտային արտադրատեսակների մատակարարման շղթան արդյունավետորեն վերահսկելու եւ ընդգրկման լայն շրջանակ ունեցող հարցերի շուրջ միջազգային մակարդակով համագործակցելու համար:



Կոնվենցիայի քարտուղարություն

Ծխախոտի վերահսկման մասին ԱՀԿ շրջանակային կոնվենցիա

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Շվեյցարիա, 1211 Ժնև 27, Ապիա պողոտա 20

Հեռ.՝ +4122 791 5043, Ֆաքս՝ +4122 791 5830

Էլ. փոստ՝ fctcsecretariat@who.int

Կայքէջ՝ www.who.int/fctc

ISBN 9 789241 505246



9 789241 505246